# Ազգ
Azg

9 ՆՈՅԵՄԲԵՐ 2013 ՇԱԲԱԹ 194(5277)

ISSN: 1829-1651

## Մարդկային կապիտալի կորուստների խնդիրները եւ արտագաղթը կանխելու ուղիները Հայաստանում

Մարդկային կապիտալի տեսությունը կայացել է 20-րդ դարի 60-ական թվականներին, ամերիկացի Նոբելյան մրցանակի դափնեկիրներ Թ. Շուլցի եւ Հ. Բեքքերի կողմից: Նշվեց, որ մարդկային կապիտալը արդյունքն է այն ներդրումների, որոնք ներառում են մարդու առողջությունը, կրթությունը եւ աշխատուժի որակավորման բարձրացումը: Ընդգծվեց, որ մարդկային կապիտալը ավելի արժեքավոր է, քան բնական եւ կապիտալային ռեսուրսները:

Հայաստանի Հանրապետությունում մարդկային կապիտալի վերարտադրության առումով անհանգստացնող է նախ բնակչության ծնելիության մակարդակի նվազման միտումը: Այսպես, վերջին 20 տարիներում ծնունդների թիվը 1000 կնոջ հաշվով 209-ից իջել է 28-ի, կրճատվել է 7,5 անգամ: Եթե ծնելիության գումարային գործակիցը մինչեւ 1990թ. ապահովում էր Հայաստանի Հանրապետության բնակչության ընդլայնված վերարտադրությունը եւ տատանվում էր 2,2-2,3 շրջանակներում, ապա 1995-2011 թվականներին հայտնվեց 1,2-1,6 սահմաններում, որը չի ապահովում անգամ բնակչության պարզ վերարտադրությունը: Հարցումները եւ ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ ծնելիության մակարդակի անկման վրա, բացի բնակչության զանգվածային աղքատությունից, սոցիալ-հոգեբանական ծանր վիճակից, ազդել են նաեւ արտագաղթի (միգրացիայի) հետեւանքով ընտանիքում տեղի ունեցող ժողովրդագրական եւ բարոյա-հոգեբանական նեգատիվ փոփոխությունները: Պատահական չէ, որ հենց 1990-ական թվականներից հետո հանրապետությունում գրանցվեցին 3 անգամ ավելի քիչ ամուսնություն եւ 6 անգամ ավելի ամուսնալուծություն: Ժողովրդագրական տեղի ունեցող զարգացումները հետազոտողները հաշվարկել են, որ այդ միտումները շարունակվելու դեպքում, եթե պահպանվեն տարբեր ձեւերով արտագաղթի ժամանակակից ծավալները, 20 տարի հետո հանրապետության բնակչությունը կկազմի ընդամենը 1 միլիոն 200 հազար մարդ: Դա արդեն երկրի համար աղետ է: Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ ցածր են բնակչության վերարտադրության եւ նրա առողջապահությանն ուղղված պետական հատկացումները: 2005թ. դրանք կազմել են ՀՆԱ-ի ընդամենը 1,5%-ը, երբ ցածր ու միջին եկամուտ ունեցող երկրներում հասել է 4-8%-ի: Դրանով է բացատրվում, որ հանրապետությունում առողջապահության ոլորտի աշխատողների միջին ամսական աշխատավարձը ամենացածրերից է: Դրա հետեւանքով շարունակում են մեծ լինել կոռուպցիոն ռիսկերը եւ անարդյունավետ մնալ պետական կամ մասնավոր ապահովագրությամբ բուժումը:

Տես էջ 4

## Հայաստանն աշխարհում 4-րդն է ռազմականացման ցուցանիշով

*Ադրբեջանին գերազանցում ենք ծանր սպառազինությամբ եւ զինծառայողների թվով, զիջում` ռազմական ծախսերով*

ԱՐԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ



Հայաստանը մտնում է աշխարհի ամենառազմականացված 10 երկրների մեջ: Այդ մասին նոյեմբերի 6-ին հրապարակված «Ռազմականացման գլոբալ ինդեքս 2013»-ում նշել է Բոննի միջազգային վերափոխման կենտրոնը (BICC): Համաձայն այդ ինդեքսի, որն ընդգրկում է աշխարհի 149 երկրների, ռազմականացման 800-բալանոց համակարգում Հայաստանը զբաղեցնում է 4-րդ տեղը` ունենալով 724 միավոր:

Վերոնշյալ ինդեքսում, ըստ ռազմականացման ցուցանիշների, երկրները բաժանված են 5 խմբերի (չհաշված այն երկրները, որոնք ընդգրկված չեն հրապարակված ինդեքսում):

Տես էջ 3

## Ի՞նչ արժե Ադրբեջանի կարծիքը հայ-թուրքական սահմանի հարցում

Լրատվամիջոցները քննարկում են Հայաստանի հետ հարաբերություններում Ադրբեջանի կարծիքը հաշվի առնելու մասին Թուրքիայի արտգործնախարարի վերջին հայտարարությունը: Արվում են մի շարք ենթադրություններ:

Միաժամանակ virtualaz.org-ը չափազանց ուշագրավ տեղեկատվություն է տարածել: Հղում անելով թուրքական «Հյուրիեթ»-ին` ադրբեջանական լրատվամիջոցը գրում է, որ «մինչեւ վերջին ժամանակներս հանրությունից գաղտնի էր պահվում, թե ինչ գնով է Ադրբեջանը Թուրքիային գազ վաճառում»:

Այդ մասին հայտնի է դարձել օրերս: Թուրքական կողմը հրապարակել է, որ նավթ եւ գազ գնում է երեք երկրից` Իրանից, Ռուսաստանից եւ Ադրբեջանից: Նավթի գների մասին ոչինչ չի ասվում, բայց ահա հրապարակայնացվել է, որ 1000 խմ գազը Թուրքիան Իրանից գնում է 480, Ռուսաստանից` 420, իսկ Ադրբեջանից` ընդամենը 320 դոլարով:

Ադրբեջանցի փորձագետները հրապարակել են, որ Թուրքիան իրենց երկրից տարեկան ստանում է 6 մլրդ խմ գազ, ինչի նկատառմամբ էլ հաշվարկել են, որ «Ադրբեջանը Թուրքիայի հետ առեւտրում միայն գազի վաճառքից տարեկան 600 մլն դոլար կորուստներ է ունենում»:

Հայտնի է դարձել նաեւ, որ TANAP գազատարի շահագործման դեպքում արտահանվող տարեկան 10 մլրդ խմ գազից «8 մլրդ խմ-ը սպառելու է Թուրքիան, ուստի կորուստները միայն մեծանալու են»: Փորձագետները նաեւ կասկածել են, որ Ադրբեջանը «ամենայն հավանականությամբ Թուրքիային նավթ նույնպես վաճառում է միջազգայինից ցածր գներով, ուստի կորուստների իրական ծավալները երեւի ավելի մեծ են»:

Ըստ երեւույթին, «Հյուրիեթ»-ի տեղեկացվածության աղբյուրը ոչ թե թուրքական, այլ ադրբեջանական կողմն է: Թուրքիայի իշխող կուսակցությունը հաստատ չէր ցանկանա, որ թուրք-ադրբեջանական «համերաշխության» գաղտնիքը բացահայտվեր, եւ հասարակության համար պարզ դառնար, որ Էրդողանի կառավարությունը բոլորովին էլ Իլհամ Ալիեւի «գեղեցիկ աչքերի» համար չէ Հայաստանի հետ հարաբերությունների կարգավորումը պայմանավորում Ադրբեջանի կարծիքով:

Իսկ ահա պաշտոնական Բաքուն կուզենար նախ թուրք հասարակությանն իրազեկել, որ նրա կառավարության դիրքորոշումը ոչ այնքան անկեղծ- եղբայրական է, որքան` վարձահրավիրված: Եվ դրա գինը Թուրքիային միջազգայինից անհամեմատ ցածր գներով նավթ եւ գազ վաճառելն է, որից, ամենայն հավանականությամբ, բաժին է ստանում նաեւ Էրդողանը:

Միաժամանակ, Ադրբեջանը կուզենար նաեւ Թուրքիային զգուշացնել, որ վերաբերմունքի փոփոխության դեպքում գազը եւ նավթը կթանկանան:

Մանավանդ որ «Հյուրիեթ»-ի բացահայտումը տեղի է ունեցել այն պնդումներին զուգահեռ, որ մոտ ապագայում Թուրքիայի ԱԳ նախարար Դավութօղլուն պատրաստվում է լինել Բաքվում, եւ «սպասվում են բավական թեժ քննարկումներ»:

Ավելացնենք նաեւ, որ ծրագրված է առաջիկայում գումարել Թուրքիա-Ադրբեջան միջպետական համագործակցության բարձրագույն խորհրդի նիստ, որին մասնակցելու համար Իլհամ Ալիեւը նախապատրաստվում է ուղեւորվել Անկարա: Ստացվում է, որ Ադրբեջանը փաստացի Թուրքիային կանչում է, որպեսզի վերջինս Հայաստանի հետ հարաբերություններում առաջընթաց քայլ չանի:

Տես էջ 3

## Աիդա Էրբալը անդրադառնում է «Ներողություն» արշավին

Նոյեմբերի 7-ին Հայկական ուսումնասիրությունների եւ հետազոտությունների ազգային ասոցիացիայի (NAASR) կենտրոնում ելույթ ունենալով` Նյու Յորքի համալսարանի քաղաքագիտության ֆակուլտետի դասախոսներից Աիդա Էրբալը անդրադարձել է 2008-ի դեկտեմբերին չորս թուրք մտավորականների նախաձեռնած «Ներողություն» արշավին:

Նա քննարկել է «Օզուր Դիլիյորուզ» (ներողություն ենք խնդրում) արշավը քաղաքական, փիլիսոփայական եւ լեզվական տեսանկյուններից: Ի՞նչ իմաստ է պարունակում տեքստը, որո՞նք են օգտագործված որոշ բառերի կամ եզրերի քաղաքական ենթատեքստերը, ինչպիսի՞ սահմանափակումներ ունի ընդհանրապես ամբողջ տեքստը եւ նման այլ հարցեր, որոնք էլ վիճելի էին դարձրել այդ նախաձեռնությունը, հաշվի առնելով նաեւ այն, որ արդի թուրքական պատմության մեջ եզակի նախադեպը չունեցող բնույթ էր կրում:

Էրբալը ժողովրդավարական տեսությունների, հետազգայնական, անցումային շրջանների քաղաքականության մեջ է առավելապես խորացած եւ «Ազատ Ալիք» բազմալեզու բլոգի (http://azadalik.wordpress.com) հիմնադիրներից է: Բլոգը մասնավորապես զբաղվում է Թուրքիայի փոքրամասնությունների հարցերով:

Հ. Ծ.

## Զարիֆ-Քերրի հանդիպում Ժնեւում

*Իրանին առաջարկվել է «միջուկային գործարք»*

Մերձավոր Արեւելքի երկրներում շրջագայությունն ավարտելով` ԱՄՆ պետքարտուղար Ջոն Քերրին նոյեմբերի 8-ին թռել է Ժնեւ, որպեսզի հանդիպում ունենա Իրանի արտգործնախարար Մոհամմադ Ջավադ Զարիֆի հետ: Այդ մասին հաղորդում է ամերիկյան NBC հեռուստաալիքը:



Բրիտանական «Թելեգրաֆ» թերթի տեղեկությունների համաձայն, ամերիկացիները Ժնեւում Իրանի ներկայացուցիչներին առաջարկել են այսպես կոչված «միջուկային գործարք»: Դա պայմանագրի ծրագիր է, որի շրջանակներում Թեհրանը պետք է կես տարով սառեցնի ուրանի հարստացումը` միջազգային պատժամիջոցների զգալի մեղմացման դիմաց:

Դատելով այն բանից, որ Զարիֆը համաձայնել է հանդիպում ունենալ Քերրիի հետ, կարելի է ենթադրել, որ տվյալ տարբերակը հետաքրքրում է իրանական կողմին:

«Թելեգրաֆը» մեջբերում է պետդեպարտամենտի բարձրաստիճան ներկայացուցիչներից մեկի այն խոսքը, որ Ժնեւում Քերրիի խնդիրն է «նպաստել բանակցություններում կողմերի դիրքորոշումների տարբերության կրճատմանը»:

Ժնեւում Իրանի եւ «Վեցյակի» երկրների բանակցություններին մասնակցում է նաեւ ԵՄ արտաքին գործերի եւ անվտանգության քաղաքականության գծով գերագույն ներկայացուցիչ Քեթրին Էշթոնը:

Իսրայելական «Հաարեց» թերթի կայքէջը հաղորդում է Իրանին առաջարկված գործարքի որոշ մանրամասնություններ: Իրանցիների միջուկային ծրագրի ընդհատումը հիմնականում պետք է արտահայտվի ուրանի հարստացման մակարդակի ու ծավալների նվազեցմամբ, այսինքն` ցենտրիֆուգերի թվի կրճատմամբ: Ինչ վերաբերում է հակաիրանական տնտեսական պատժամիջոցների մեղմացմանը, կայքէջը ամերիկյան աղբյուր վկայակոչելով հաղորդում է, որ համաձայնագիրը չի վերաբերի հիմնական պատժամիջոցներին, որոնք կապված են իրանական բանկերի եւ իրանական նավթի վրա ԵՄ սահմանած բեռնարգելքի հետ:

Պ. Ք.

# Եթե Հայաստանը ճանաչի Արցախի անկախությունը...

Որ Հայաստանի՝ Մաքսային միության միանալու որոշման բարձրաձայնումից հետո, նաեւ այդ միությանը մեր երկրի հնարավոր անդամակցությունից հետո որոշ խնդիրներ առաջանալու են հայ-արցախյան սահմանին, ակնհայտ է: Մասնավորաբար Հայաստանը, լինելով Մաքսային միության անդամ, պետք է մաքսային սահմանակետեր դնի՝ Արցախի հետ մեր սահմանին, ինչը, հասկանալիորեն, կդժվարացնի Հայաստան-Արցախ ապրանքաշրջանառությունը, օրինակ: Այս համատեքստում չեն դադարում խոսակցությունները, որ Արցախը եւս պետք է հայտարարի Մաքսային միությանը միանալու իր որոշման մասին, ընդ որում, հայկական երկրորդ հանրապետությունը Մաքսային միությունում տեսնելու ցանկության եւ կարեւորության մասին խոսում են (եւ ոչ քիչ) նաեւ ռուսական մամուլում: Ինչ խոսք, սա ամեն ինչից զատ նաեւ ճնշում է Բաքվի հանդեպ, վերջինիս եւս Մաքսային միություն ներքաշելու նպատակով, բայց դրանով Արցախին Մաքսային միությունում ներառելու հավանականությունը չի դադարում ինքնին արդեն ուշագրավ լինելուց: Երեկ այս թեմայով խոսեց Հայաստանում Ռուսաստանի նախկին դեսպան, այժմ Կասպիական համագործակցության ինստիտուտի տարածաշրջանային ծրագրերի տնօրեն Վյաչեսլավ Կովալենկոն: Դեսպանը Երեւան-Մոսկվա տեսակամրջի ժամանակ հայտարարել է. «Հայաստանի առջեւ հարց կա՝ ճանաչել կամ չճանաչել Լեռնային Ղարաբաղի անկախությունը: Եթե Հայաստանը ճանաչի, ապա այդ ժամանակ նոր միայն կարելի է սկսել խոսակցությունները Լեռնային Ղարաբաղին Մաքսային միության կազմում ներգրավելու մասին»: Ռուս դիվանագետը նաեւ ընդգծել է. «Հայաստանը կարծում է, որ այս իրավիճակում Ղարաբաղի անկախության ճանաչումը կընկալվի որպես պրովոկացիա եւ կարող է դրդել Ադրբեջանին՝ վերսկսելու ռազմական գործողությունները»:



Փաստորեն, Կովալենկոն ամենեւին չի բացառում, որ կարելի է Արցախի հետ բանակցություններ վարել Մաքսային միությանը վերջինիս միանալու նպատակով, ավելին, Կովալենկոն տեսնում է հավանականություն, որ Արցախը Մաքսային միություն կարող է մտնել որպես անկախ, ինքնուրույն գործող պետություն: Սա, իհարկե, Բաքվի հանդեպ Մոսկվայի ճնշման տիրույթում է նաեւ տեղավորվում, էական մեսիջ է Բաքվին, որ իրադարձությունների որոշ զարգացման պարագայում Մաքսային միությունն իր դռները կարող է եւ բացել անկախ Արցախի առջեւ, ինչը, հասկանալի է, ամբողջովին անիրատեսական կդարձնի Ղարաբաղը «վերադարձնելու» Ադրբեջանի՝ առանց այդ էլ անիրական դարձած պլանները:

Կովալենկոն հանդես է եկել այլ հայտարարությամբ եւս, մասնավորաբար անդրադառնալով Ադրբեջանի կողմից նոր պատերազմ սկսելու հավանականությանը, ինչը, ըստ ռուս դիվանագետի, կմեծանա, եթե Հայաստանը ճանաչի Լեռնային Ղարաբաղի անկախությունը, իսկ Ռուսաստանը կցուցաբերի հետեւյալ պահվածքը. «Ես չեմ կարծում, որ Ռուսաստանն այդ պարագայում կցուցաբերի ինչ-որ ռադիկալ պահվածք: Ռուսաստանը կցուցաբերի այն նույն պահվածքը, ինչը ցուցաբերում է վերջին ժամանակներում եւ ինչի միջոցով հնարավոր է դառնում պահպանել տարածաշրջանում խաղաղությունը», խիստ դիվանագիտորեն ասել է Կովալենկոն: Հիշեցնենք, որ վերջերս ռուսական «Կրասնայա Զվեզդա»-ին տված հարցազրույցում Հայաստանում տեղակայված ռուսական 102-րդ ռազմաբազայի հրամանատար Անդրեյ Ռուզինսկին հայտարարեց. «Ադրբեջանի կողմից Լեռնային Ղարաբաղն իրեն ուժով ենթարկելու ամեն փորձի ժամանակ Ռուսաստանը, ելնելով իր՝ այդ թվում ՀԱՊԿ դաշնագրային պարտավորություններից, կմիջամտի ռազմական գործողություններին»:

Իսկ առայժմ, քանի դեռ Հայաստանը պաշտոնապես չի ճանաչել Արցախի Հանրապետության անկախությունը, ինչը, ըստ ռուս դիվանագետի, անհնարին է դարձնում խոսակցություններն անգամ Արցախին Մաքսային միության կազմում ներառելու մասին, ըստ նույն Կովալենկոյի՝ «Ես վստահ եմ, որ Հայաստանի իշխանություններն ու Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի նախագահ Վիկտոր Խրիստենկոն կգտնեն ճիշտ լուծումն այն հարցի, թե ինչպես պետք է կարգավորվի Հայաստանի ու Լեռնային Ղարաբաղի սահմանը Մաքսային միությանը Հայաստանի անդամակցելուց հետո»:

Հ. ԱՓՅԱՆ

ԱՆԴՐԱԴԱՐՁ

# Մի քիչ տերմինաբանություն

**Եթե ՀՀ քաղաքացի Շանթ Հարությունյանը Ազատության կամ որեւէ այլ հրապարակում հանրահավաք հրավիրեր ու բարձրախոսով հայտարարեր, որ «այս իշխանություններից պետք է անհապաղ ազատվել», կամ՝ «մենք պահանջում ենք Սերժ Սարգսյանի գլխավորությամբ ողջ գործող իշխանությունների հրաժարականը», ու եթե այս հայտարարություններից հետո Շանթ Հարությունյանին Ազատության հրապարակում հերթապահող ոստիկանները ձերբակալեին, կալանավորեին, բանտարկեին, ապա նույն այդ վայրկյանից Շանթ Հարությունյանը կհամարվեր քաղաքական բանտարկյալ, այսինքն՝ քաղաքացի, որն անազատության մեջ է սեփական քաղաքական հայացքներն ունենալու եւ դրանք բարձրաձայնելու համար: Բայց երբ քաղաքացի Շանթ Հարությունյանը, բացի այս հայտարարություններից (այս հայտարարությունները չափազանց մեղմ են), հանդես է գալիս նաեւ բռնության կոչերով, զինվում է փայտերով ու հրկիզող շշերով, այնուհետեւ դրանք նետվում են ոստիկանների ուղղությամբ, եւ դրանից հետո միայն Շանթ Հարությունյանը ձերբակալվում է, ապա նա ոչ մի պարագայում չի կարող դիտարկվել որպես քաղաքական բանտարկյալ, քանի որ անազատության մեջ է հայտնվել ոչ թե սեփական քաղաքական հայացքներն ունենալու եւ դրանք բարձրաձայնելու համար, այլ բռնության կոչերի եւ բռնություն կիրառելու համար:**

**Նույնը վերաբերում է Շանթ Հարությունյանի համախոհներից յուրաքանչյուրին: Երեկ ոստիկանությունը հայտնեց, որ նոյեմբերի 5-ին Մաշտոցի պողոտայում տեղի ունեցած միջադեպի հետեւանքով ձերբակալված 20 հոգուց 8-ի նկատմամբ առաջադրվել է մեղադրանք:**

**Ութ ձերբակալվածներին մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 316-րդ հոդվածի երկրորդ մասով. «Իշխանության ներկայացուցչի կամ նրա մերձավորի նկատմամբ կյանքի կամ առողջության համար վտանգավոր բռնություն՝ կապված նրանց կողմից իրենց աշխատանքային պարտավորությունները կատարելու հետ»: Նման մեղադրանքով կալանավորվել են Ավետիս Ավետիսյանը, Լիպարիտ Պետրոսյանը, Արմեն Հովհաննիսյանը, Վարդան Վարդանյանը, Միսակ Առաքելյանը, Ալբերտ Մարգարյանը, Անուշավան Գրիգորյանը եւ Մկրտիչ Հովհաննիսյանը: Ավելի ուշ նույն մեղադրանքը հարուցվեց. եւ կալանավորվեցին Տիգրան Պետրոսյանը, Հայկ Հարությունյանը, Դավիթ Մկրտչյանը, Սեւակ Մնացականյանը, Արեգ Պողոսյանը եւ Շանթ Հարությունյանը: Քրեական այս հոդվածով օրենսգիրքը սահմանում է պատիժ՝ ազատազրկում 5-10 տարի ժամկետով: Ոստիկանության քննչական գլխավոր վարչության հատկապես կարեւոր գործերով քննության վարչությունում գործի քննությունը շարունակվում է...**

**Հիմա կարո՞ղ ենք արդյոք պնդել, որ հիշյալ անձինք կալանավորվել են իրենց քաղաքական հայացքների համար: Եթե այդպես լիներ, ապա նրանք կձերբակալվեին ու կկալանավորվեին ավելի վաղ, քան փայտերով ու հրկիզող շշերով զինվելն ու դրանք գործածելը, այն պահից, երբ պարզապես բարձրաձայնում էին իրենց քաղաքական չհանդուրժող դիրքորոշումը: Հետեւաբար, կալանավորվածների մասին մենք չենք կարող ասել, որ նրանք քաղբանտարկյալներ են: Բացի սրանից, եթե նոյեմբերի 5-ին բռնություն գործածները՝ անկախ նրանց սովորական քաղաքացի թե ոստիկան լինելուց (ոստիկանությունը պնդում է, որ ոստիկանությունը բռնություն չի կիրառել), չպատժվեն օրենքի ողջ խստությամբ, ապա մեր երկրում մշտապես կգտնվեն առնվազն 30 հոգի, ովքեր մշտապես դժգոհ կլինեն ծայրահեղության աստիճանի եւ կկարողանան իրենց դժգոհությունն արտահայտել՝ բենզինով շշերն այս ու այն կողմ նետելով: Հասկանալի է, որ խնդիրը ոչ թե դժգոհ, անհնազանդ, անգամ՝ ծայրահեղական տրամադրված մարդկանց մեկուսացումն է՝ հնազանդ ու հարմարված հասարակությունից, այլ բռնությունները, որոնց հետեւանքով քաղաքացիները վնասվածքներն են ստանում, բացառելը, դրանք կանխարգելելը, ինչը նոյեմբերի 5-ին տեղի չունեցավ եւ էլի տեղի չի ունենա, եթե բոլոր մեղավորներն անխտիր չպատժվեն:**

**Ուրեմն խոսքը մարդկանց՝ սեփական քաղաքական ուրույն հայացքների համար պատժելու մասին չէ, ինչը միանգամայն դատապարտելի է, խոսքն ընդամենը հանցագործություն կատարելու համար պատիժ ստանալու մասին է, իսկ նոյեմբերի 5-ին Մաշտոցի պողոտայում տեղի է ունեցել հանցագործություն. տերմինները սահմանազատել է պետք:**

ՀՈՎԻԿ ԱՓՅԱՆ

# ՊԵԿ-ի պարզաբանումը «Ինչքան շատ անվադողերի պայթյուն, այնքան մեծ եկամուտ» հրապարակման վերաբերյալ

Ի պատասխան 07.11.2013թ-ի «Ազգ» օրաթերթի «Ինչքան շատ անվադողերի պայթյուն, այնքան մեծ եկամուտ» հրապարակման, տեղեկացնում ենք, որ ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեն հանդիսանում է գործադիր իշխանության մարմին եւ համաձայն իր լիազորությունների իրականացնում է այն գործառույթները, որոնք սահմանված են ՀՀ օրենսդրությամբ:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ հայտնում ենք, որ ՄԱԿ-ի «Վտանգավոր թափոնների երկրից երկիր տեղափոխման նկատմամբ հսկողություն սահմանելու մասին» Բազելյան կոնվենցիայով Հայաստանի Հանրապետության ստանձնած պարտավորությունների կատարումն ապահովելու նպատակով Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից ընդունվել են 08.12.1995թ. թիվ 97 եւ 08.07.2004թ. թիվ 1093-Ն որոշումները, որոնց համաձայն, արգելվում է Հայաստանի Հանրապետություն եւ Հայաստանի Հանրապետության տարածքով ՀՀ կառավարության 08.07.2004թ. թիվ 1093-Ն որոշմամբ հաստատված, արգելված վտանգավոր թափոնների ցանկում ընդգրկված, հին դողերի, մաշված կամերաների (անվադողերի) ներմուծումը եւ տարանցիկ փոխադրումը:

Միեւնույն ժամանակ պաշտոնապես հայտարարում ենք, որ ներկա պահին Հայաստանի Հանրապետություն անվադողեր ներմուծող կազմակերպությունների թիվը կազմում է ավելի քան երկու տասնյակ: Ընդ որում դրանք խոշոր ներմուծողներն են. փոքր քանակներ ներմուծողների քանակը մի քանի անգամ ավելի մեծ է: Այս քանակությամբ ներմուծողների պարագայում անհիմն ենք համարում պնդումները՝ ներքին շուկայի այս սեգմենտում մենաշնորհի առկայության վերաբերյալ:

ՀՀ ԿԱ ՊԵԿ տեղեկատվության եւ հասարակայնության հետ կապերի բաժին

# ՎիվաՍել-ՄՏՍ-ի հաճախականություններին անօրինական եւ չարտոնված սարքերի միջոցով միջամտությունը վերացված է

**ՎիվաՍել-ՄՏՍ-ը տեղեկացնում է, որ ընկերությանը հատկացված հաճախականություններին իրականացվող միջամտության աղբյուրը՝ չարտոնված եւ անօրինական սարքերը, հայտնաբերվել են, եւ դրանց գործունեությունը դադարեցվել է: Վերը նշված խնդիրների պատճառով ՎիվաՍել-ՄՏՍ-ի բաժանորդները որոշակի դժվարությունների էին հանդիպում Երեւանի կենտրոնական հատվածում՝ ներառյալ Իսահակյան, Թումանյան, Աբովյան, Տերյան, Մոսկովյան փողոցներին, ինչպես նաեւ «Կասկադ» համալիրի եւ մետրոպոլիտենի «Երիտասարդական» կայարանին հարող տարածքներում:**

**Անօրինական սարքերը հայտնաբերվել են, եւ դրանց գործունեությունը դադարեցվել է հեռահաղորդակցության ոլորտի համապատասխան մարմնի փորձագետների աջակցությամբ եւ նրանց հետ համագործակցաբար:**

**ՎիվաՍել-ՄՏՍ-ը տեղեկացնում է, որ հետագայում եւս ընկերությանը հատկացված հաճախականություններին միջամտող սարքերի չարտոնված եւ անօրինական տեղադրման ու օգտագործման դեպքում ընկերությունը կձեռնարկի բոլոր անհրաժեշտ օրինական քայլերը՝ վերը նշված սարքերի գործունեությունը կանխելու եւ դադարեցնելու համար:**

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակութեան ԻԲ Տարի
Հիմնադիր եւ հրատարակիչ
**«ԱԶԳ ՕՐԱԹԵՐԹ» ՍՊԸ**
Երեւան 0010, Հանրապետութեան 47
e-mail: azg@azg.am, azg2@arminco.com
**www.azg.am**
Գլխաւոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՒԵՏԻՔԵԱՆ հեռ. 060 271117
Խմբագիր
ՊԱՐՈՅՐ ՅԱԿՈԲԵԱՆ հեռ. 060 271113
Հաշվապահութիւն (գովազդ) հեռ. 582960
060 271112
Լրագրողների սենեակ հեռ. 060 271118
Համակարգչ. ծառայութիւն հեռ. 060 271115
***Շուրջօրեայ լրահաւաք ծառայութիւն***
հեռ 060 271114, 010 529353
Համակարգչային շարուածքը՝ «Ազգ» թերթի
Թերթի նիւթերի ամբողջական թէ մասնակի արտատպումները տպագիր մամուլի միջոցով, ռադիոհեռուստատեսութեամբ կամ համացանցով, առանց խմբագրութեան գրաւոր համաձայնութեան խստիւ արգելւում են համաձայն ՀՀ հեղինակային իրաւունքի մասին օրէնքի:
Նիւթերը չեն գրախօսւում ու չեն վերադարձւում:

# «Շնորհավորանք» a la Obama

«Մաղթում եմ լավագույնը Ադրբեջանի նախագահի ձեր երրորդ ժամկետը սկսելու առնչությամբ», ոչ ավել, ոչ պակաս այդպես է ձեւակերպել իր կիսաշնորհավորական ուղերձը Ալիեւին Միացյալ Նահանգների նախագահ Բարաք Օբաման: Եվ այն, ինչ ադրբեջանական ողջ մամուլը ներկայացնում է որպես շնորհավորական նամակ, իրականում բնավ էլ այդ բովանդակությունը չունի՝ կապված Ադրբեջանի նախագահի վերընտրության հետ:

Օբաման իր նամակում, որ հասանելի է Ադրբեջանի նախագահի պաշտոնական կայքէջում, այդուհետեւ նշել է, որ կողմերը կշարունակեն ռազմավարական իրենց գործընկերության կարեւոր հարցերում երկխոսությունը:

«Ավելի քան 2 տասնամյակ շարունակվող մեր երկկողմ հարաբերությունները նշանակալից ներդրում են ունեցել տարածաշրջանային անվտանգության հարցում», նամակում նշել է Միացյալ Նահանգների նախագահը, ավելացնելով, որ ԱՄՆ-ը ողջունում է այդ ժամանակահատվածում Ադրբեջանի տնտեսական եւ սոցիալական տպավորիչ առաջընթացը՝ պատրաստակամ ընդհանուր մարտահրավերների պարագայում ամրապնդելու գործընկերությունն ու խորացնելու համագործակցությունը:

Միացյալ Նահանգներն ու Ադրբեջանը, ըստ Օբամայի, մի շարք հարցերում սերտ համագործակցություն ունեն, բարձր է գնահատվում գործընկերությունը Աֆղանստանում, ահաբեկչության դեմ պայքարի հարցերում:

Այդուհետեւ նամակի հեղինակը անդրադառնում է ղարաբաղյան խնդրին, նշելով, թե ԱՄՆ-ը պատրաստ է աշխատել Ադրբեջանի հետ «օգտագործելու խաղաղ, բանակցված կարգավորում գտնելու պատմական հնարավորությունը», միեւնույն ժամանակ ողջունելով այս ամսվա վերջին հանդիպելու մասին Ալիեւի եւ Հայաստանի նախագահի որոշումը: Դրա հետ մեկտեղ ԱՄՆ նախագահը խոսում է Հյուսիսային էներգետիկ միջանցքի, տնտեսական բազմազանեցման, տարածաշրջանային կայունության ու անվտանգության հարցերի շուրջը համագործակցության մասին:

Նամակում անդրադարձ կա նաեւ հենց ընտրություններին: Օբաման «խրախուսում է Ադրբեջանին՝ քայլեր ձեռնարկել մեծացնելու հարգանքը հավաքների, արտահայտվելու համընդհանուր ազատության նկատմամբ, նպաստելու քաղաքական բազմակարծությանն ու արդարադատության անկախությանը, նաեւ ամրապնդելու ընտրական համակարգը»:

Իր խոսքի վերջում Օբաման Ադրբեջանի ժողովրդին մաղթել է խաղաղություն եւ հաջողություն անկախության 22-ամյակի առնչությամբ, ստորագրելով նամակը՝ «Անկեղծորեն՝ Բարաք Օբամա, Ամերիկայի Միացյալ Նահանգների նախագահ»:

Նամակը փաստացի հետաքրքրական շեշտադրումներով մաղթանքների հավաքածու է, քան շնորհավորական ուղերձ, այն էլ «ռազմավարական գործընկեր երկրի վերընտրված նախագահի»:

Վ. Պ.

Մ. ՆԱՀԱՆԳՆԵՐ

# Տոնահանդես եւ գիտաժողով՝ նվիրված Մեսրոպ Մաշտոցի 1650-ամյակին

Հայ ազգի մեծագույն երախտավորներից Սուրբ Մեսրոպ Մաշտոցի ծննդյան 1650-ամյակը մեծ ոգեւորությամբ եւ հանդիսավոր պայմաններում նշվել է Կալիֆոռնիայում: Ըստ խմբագրությանը հասցեագրված հաղորդագրության՝ հոկտեմբերի 26-ին Վուդբերի համալսարանի (Բըրբենկ) Ֆլետչեր Ջոնս դահլիճում տեղի է ունեցել ակադեմիական գիտաժողով՝ կազմակերպության ՀԲԸՄ-ի, Արարատ-Էսքիճյան թանգարանի, Համազգային կրթական եւ մշակութային ընկերության, «Նոր սերունդ» եւ Ստամբուլահայ մշակութային կազմակերպությունների:

Գիտաժողովին մասնակցել են պրոֆ. հայր Լեւոն Հայրապետյանը, դոկտ. Աբել Մանուկյանը, դոկտ. Երվանդ Ջորյանը, պրոֆ. Հակոբ Գյուլուջյանը եւ պրոֆ. Ռոբերտ Հյուսենը: Քննարկվել են նոր աշխարհաքաղաքական պայմաններում մարտահրավերներին դիմակայելու խնդիրները:

Իսկ դրանից առաջ՝ սեպտեմբերի 13-ին, ըստ «Նոր օրի», Գլենդեյլի հանրային գրադարանի դահլիճում տեղի են ունեցել տոնահանդես եւ հյուրասիրություն գեղարվեստական ճոխ հայտագրով, մասնակցել են պրոֆ. Արտեմ Սարգսյանը, բանաստեղծ Գեւորգ Քրիստինյանը, Հովսեփ Նալբանդյանը, դոկտ. Կարպիս Տեր-Եղիայանը:

Հանդիսավարն է եղել Անահիտ Իշխանյանը:

Հ. Ծ.

# Հայաստանն աշխարհում 4-րդն է ռազմականացման ցուցանիշով

*1-ին էջից*

Հայաստանն ու Ադրբեջանը մտնում են աշխարհի ամենառազմականացված 30 երկրների մեջ: Ավելին, երկու երկրներն ընդգրկված են «Ռազմականացման գլոբալ ինդեքս 2013»-ի առաջին տասնյակում: Ադրբեջանը 8-րդ տեղում է 673 միավոր ցուցանիշով:

BICC-ի փորձագետները նշում են, որ Ադրբեջանն անցյալում զբաղեցրել է բարձր դիրքեր, իսկ Հայաստանն այս տարի նոր մասնակից է: «2013-ին Հայաստանի տվյալներն ընդգրկել են նաեւ ռեզերվիստներին, ինչը բացատրում է, թե ինչու այս երկիրն ավելի բարձր դիրքեր ունի», ասված է նրանց եզրակացութան մեջ: Միաժամանակ, BICC-ն ընդգծում է, որ Հարավային Կովկասում ռազմականացումն ուղեկցվում է «դիվանագիտական տաք հռետորաբանությամբ եւ Լեռնային Ղարաբաղի շուրջ երկարաժամկետ ռազմական կոնֆլիկտ սկսվելու ռիսկով»:

Ինդեքսները սահմանելիս Բոննի միջազգային վերափոխման կենտրոնը նկատի է ունեցել երեք հիմնական ցուցանիշներ՝ ռազմական ծախսեր, ծանր սպառազինության ցուցանիշներ եւ զինծառայության մեջ գտնվող մարդկանց քանակ: Համաձայն դրանց էլ որոշվել են ռազմականացման միավորները եւ երկրի զբաղեցրած հորիզոնականը այս զեկույցում:

Այսպիսով, Հայաստանի ռազմական ծախսերի ինդեքսը կազմել է 4,44, Ադրբեջանինը՝ 4,47, մարդկանց թվի ինդեքսը Հայաստանի դեպքում կազմել է 6,18, Ադրբեջանի դեպքում՝ 5,55, ծանր սպառազինության ինդեքսը Հայաստանի համար կազմել է 2,97, Ադրբեջանինը՝ 2,83:

Այսինքն, Հայաստանը գերազանցում է Ադրբեջանին ծանր սպառազինությամբ եւ զինծառայության մեջ գտնվող մարդկանց ցուցանիշներով եւ զիջում ռազմական ծախսերի ցուցանիշով: Սա նշանակում է, որ Ադրբեջանի սպառնալիքները՝ պատերազմ սկսելու մասին, մնալու են որպես զուտ հոխորտանքներ, քանի որ մեզ թշնամի երկիրը ոչ միայն չի գերազանցում մեր երկրին ծանր սպառազինությամբ, այլեւ զիջում է, նույնը նաեւ զինծառայության մեջ ընդգրկված մարդկանց քանակի առումով: Սա էլ նշանակում է, որ Ադրբեջանի ահռելի ռազմական ծախսերը ոչ միայն գերազանցություն չեն հանգեցրել մեր նկատմամբ, ինչի մասին այդ երկրում սիրում են տարբերաբար հայտարարել, այլեւ ծանր սպառազինության առումով զիջում են մեզ: Հայաստանը, չնայած ավելի սահմանափակ ռազմական ծախսերին, առավել արդյունավետ է զինվում եւ հայկական բանակն էլ ունի անհրաժեշտ ամեն ինչ Ադրբեջանին համարժեք հարված հասցնելու համար:

Ինչ վերաբերում է ամենառազմականացված երկրների առաջին տասնյակին եւ այդ երկրների միավորներին, ապա դրանք հետեւյալն են.

| | |
|---|---|
| 1. Իսրայել | 794 միավոր |
| 2. Սինգապուր | 752 միավոր |
| 3. Ռուսաստան | 729 միավոր |
| 4. Հայաստան | 724 միավոր |
| 5. Սիրիա | 714 միավոր |
| 6. Հորդանան | 694 միավոր |
| 7. Հարավային Կորեա | 679 միավոր |
| 8. Ադրբեջան | 673 միավոր |
| 9. Կիպրոս | 667 միավոր |
| 10. Քուվեյթ | 666 միավոր |

# Օբաման ներողություն խնդրեց բուժապահովագրությունից զրկված ամերիկացիներից

*Նրա վարկանիշն իջել է 40 տոկոսի*



ԱՄՆ նախագահ Բարաք Օբաման ներողություն է խնդրել այն ամերիկացիներից, ովքեր առողջապահությունը բարեփոխելու իր նախաձեռնության պատճառով չեն կարողանա պահպանել բուժապահովագրման սեփական ծրագրերը:

«Ցավում եմ, որ նրանք այդ վիճակում հայտնվեցին իմ տված երաշխիքների պատճառով», հայտարարել է նախագահը NBC News հեռուստաալիքի եթերում: «Մեզ սպասում է տքնաջան աշխատանք, բայց մարդիկ պետք է իմանան. մենք իրենց լսում ենք եւ մտադիր ենք հնարավոր ամեն ինչ անել ծանր վիճակում գտնվողներին օգնելու համար», ավելացրել է նա:

Առողջապահության եւ սոցիալական ապահովության նախարարությունը 2010-ի հուլիսին հաշվարկել է, որ առողջապահության համակարգի բարեփոխման ObamaCare նախագահական ծրագերի հետեւանքով ապահովագրությունից կզրկվի 14 մլն մարդկանց 40-67 տոկոսը:

ObamaCare-ը այժմ տալիս է կասկածելի արդյունքներ: Օրինակ, բուժապահովագրման պայմանագրի նոր տարբերակներ առաջարկող կայքէջը առաջվա պես անկայուն է գործում: Առողջապահության նախարար Քեթլին Սեբելիուսը Կոնգրեսից ներողություն է խնդրել պետական բուժապահովագրության համակարգի այդ կայքէջի անհաջող աշխատանքի համար:

Օբաման խոստովանել է, որ լուրջ բարդություններ են ծագել բոլոր ամերիկացիների համար բուժապահովագրություն նախատեսող բարեփոխման իրականացման գործում:

Մի շարք փորձագետների կարծիքով, կայքէջի վատ աշխատանքը իրավաբանական սողանքներ ստեղծում ապահովագրություն չստանալու համար: Նման պայմաններում վերջին օրերին Օբամայի վարկանիշը երկրում կտրուկ իջել է՝ հասնելով աննախադեպ ցածր 40 տոկոսի:

# Քյոլնի հայ մշակույթի օրերը՝ 10-րդ տարին անընդմեջ

Նոյեմբերի 9-29 Քյոլնում անցկացվում են արդեն ավանդական դարձած ամենամյա «Հայ մշակույթի օրերը»՝ այս անգամ հիշատակելով Ֆրանց Վերֆելի «Մուսա լեռան 40 օրերը» վեպի հրատարակման 80-ամյակը: Գերմանահայոց առաջնորդարանի մշակույթի հանձնախմբի եւ Քյոլնի կաթոլիկական կենտրոնի նվիրվածության արդյունքում կազմակերպվող հոբելյանական 10-րդ միջոցառումների հասցեն Քյոլնի Մայր տաճարին դիմահայաց Դոմֆորումն է, որտեղ նոյեմբերի 9-ին, ժամը 19.30-ին բացման համերգին ելույթ կունենան միջազգային մրցույթների դափնեկիր, 22-ամյա դաշնակահարուհի Ռուզաննա Մինասյանը, 21-ամյա սոպրանո Կարինե Մինասյանը՝ Քյոլնի Սուրբ Սահակ-Մեսրոպ եկեղեցու «Կոմիտաս» երգչախմբի ուղեկցությամբ:

Նոյեմբերի 10-ին, ժամը 15-ին Լյուդվիգ թանգարանի ֆիլմֆորումում կցուցադրվի Ատոմ Էգոյանի «Արարատը»: Ինչպես նախորդ տարիներին, այս անգամ էլ հայոց այբուբենի եւ լեզվի գաղտնիքներին նոյեմբերի 16-ի ժամը 11-ին Դոմֆորումում կծանոթացնի Բրյուսովի համալսարանի շրջանավարտ, 1991-ից Դյուսելդորֆի VHS-ում ռուսաց, 2003-ից՝ հայոց լեզու դասավանդող Հասմիկ Հակոբյանը՝ հետաքրքրվողներին առաջարկելով հայոց լեզվի ուսուցման վճարովի դասընթացներին մասնակցել: Մշակութային մյուս միջոցառումների մասին առավել հանգամանալից՝ առաջիկայում:

Ան. Հ.
Գերմանիա

# Ի՞նչ արժե Ադրբեջանի կարծիքը...

*1-ին էջից*

Ինչպե՞ս կընդունի այդ բացահայտումը հենց ադրբեջանական հանրությունը, որին եւ Բաքուն, եւ Անկարան կերակրում են «մեկ ազգ, երկու պետություն» շաղակրատանքներով, երբ իրականում կողմերի հարաբերությունները շատ հեռու են եղբայրությունից:

Ինչ վերաբերում է գազի կամ նավթի գներին, ապա Թուրքիան թերեւս կարող է պահանջել, որ Ադրբեջանը իր հետ առեւտրում անցնի զրոյական շահույթի: Չէ՞ որ Թուրքիան է «ազատագրել» Բաքուն եւ ադրբեջանական պետություն ստեղծել: Այդ առթիվ նախանցյալ տարի Բաքվում թափանցիկ ակնարկ արել է նույն Դավութօղլուն՝ ասելով, թե հույս ունի, որ «ադրբեջանցի եղբայրները լավ են հասկանում, թե որ երկրի ազատարար զինվորի հուշարձանն է կանգնեցված այստեղ»: Իսկ Բաքվում թուրք «ազատարար» զինվորի հուշարձանն է կանգնեցված:

Այնպես որ՝ ամեն ինչ իր գինն ունի, բայց անկախ պետությունն ամենաթանկ նվերն է, որ Թուրքիան մատուցել է Կովկասի թաթարներին:

Վ. Ա.

# Մարդկային կապիտալի կորուստների խնդիրները եւ արտագաղթը կանխելու ուղիները Հայաստանում

*1-ին էջից*

Մարդկային կապիտալի կորուստները աճելու միտում ունեն հատկապես սիրտ-անոթային եւ չարորակ նորագոյացությունների արագ զարգացումների հետեւանքով: Ցավալի է, որ այդ հիվանդությունների տարիքը երիտասարդանալու միտում ունի: Դրան նպաստել են նաեւ պահանջվող առողջապահական ծառայությունների համար մեր աղքատ բնակչության վճարունակ ցածր հնարավորությունները: Տնային տնտեսությունների հետազոտությունները ցույց են տալիս, որ վերջին տարիներին նվազել են ընտանիքների կողմից բժշկական ծառայությունների դիմաց կատարվող վճարումները: Այդպես, 2011թ. ՀՀ տնային տնտեսությունների կողմից բժշկական ծառայությունների համար կատարած վճարումները կազմել են ընտանիքի ամբողջական ծախսերի 7,6%-ը՝ 2009թ.-11,2%-ի դիմաց: Վիճակը հատկապես վատ է գյուղերում: Գյուղում բնակիչը մեկ ամսում առողջապահության վրա ծախսում է ընդամենը 537 դրամ: Մյուս կողմից, եթե տնային տնտեսությունը բուժման համար հարկադրված մեծ ծախսեր է կատարում, ընտանիքը կարող է հայտնվել աղքատության գծից ներքեւ: Տնային տնտեսությունների հետազոտություններից պարզվել է, որ հանրապետության տնային տնտեսությունների 6%-ն աղքատ է դարձել առողջության վերականգնման համար ընտանիքի բյուջեից վճարումներ կատարելու հետեւանքով:

Վերջին 20 տարիներում մարդկային կապիտալի վերարտադրության ընդհանուր համակարգում մեծ կորուստներ ունեցավ նաեւ կրթական համակարգը, կրթական կապիտալը: Հիշենք, որ 1920թ. սկսած Խորհրդային Հայաստանում կրթությունը, այդ թվում նաեւ նախադպրոցական կրթությունը, մեծ զարգացում ստացավ: Մարդկային զարգացման ընդհանուր ինդեքսում, կրթության ինդեքսով Հայաստանը առաջավոր տեղ գրավեց: Հայաստանը հայտնվեց Սովետական Միության ամենաառաջնակարգ տեղերում: Ավելին, ձեւավորվեց բարոյա-քաղաքական եւ հայրենասիրական մեծ արժեքներով օժտված մարդկային կապիտալ, որը Հայրենական մեծ պատերազմում եւ Արցախի ազատագրման գոյամարտում հերոսության փայլուն էջեր գրեց:

1990-ական թվականներին մեծ հարված հասցրվեց նաեւ կրթությանը: Հիմնովին կործանվեց նախադպրոցական կրթությունը: Ներկայումս հանրապետության 400-ից ավելի համայնքներում ընդհանրապես չկան նախադպրոցական հաստատություններ (մսուր-մանկապարտեզներ), իսկ 2004թ. երեխաների ընդհանուր ընդգրկվածությունը դրանցում կազմել էր ընդամենը 20% (27,4% քաղաքում, 8,7% գյուղում), 2011թ. 26%, երբ աշխարհի առաջավոր երկրները (Ճապոնիան) հասել են 90% ընդգրկվածության:

Հայաստանի կառավարությունը 2008թ. հաստատեց «Նախադպրոցական կրթության բարեփոխումների 2008-2015թ. ռազմավարության ծրագիր», որով նախատեսվում է մինչեւ 2015թ. ավագ նախադպրոցական տարիքային խմբի (5-6 տարեկաններ) ընդգրկվածությունը հասցնել մինչեւ 90%: Եղած փաստական աճի ցածր տեմպերով դա իրականանալ չի կարող:

Հանրապետությունում մտահոգող խնդիր է նաեւ երեխաների ընդգրկվածությունը հանրակրթական դպրոցներում: Ըստ պաշտոնական վիճակագրական ծառայության աղբյուրների՝ 2002-2004 թվականներին դպրոց չհաճախող երեխաների թիվը կազմել է համապատասխանաբար 1531, 4823 եւ 7630 հոգի: Անգրագիտությունը ոչ թե վերացման, այլ աճի միտում ունի: 2011թ. մարդահամարի արդյունքներում մոտ 108169 տղամարդիկ չունեն տարրական կրթություն, իսկ 9864-ը տառաճանաչ չեն: Ընդ որում, կրթական մակարդակով, 2011թ. գյուղական համայնքները շուրջ երեք անգամ զիջում են քաղաքայիններին: Անգամ 2011թ. երկրում հազարավոր մարդիկ ուղղակի անգրագետ էին, որը անհամատեղելի է 21-րդ դարի մարտահրավերներին: Այդ բոլորի հետեւանքով Հայաստանն այսօր կրթության որակի ցուցանիշով գրավում է 105-րդ տեղը:

Մարդկային կապիտալի կորուստներից են գործազրկությունը, աշխատունակ բնակչության թերզբաղվածությունը եւ ոչ մասնագիտությամբ աշխատելը: 1990-ական թվականների խոր ճգնաժամը հանգեցրեց աշխատունակ բնակչության զանգվածային գործազրկության: 1998թ. հանրապետությունում պաշտոնապես գրանցված գործազրկությունը 9,4% էր, իսկ ոչ պաշտոնական հետազոտության արդյունքներով իրական գործազրկությունը՝ 27,3%: 2007-2008թթ. մեր հետազոտության նյութերով հիմնական աշխատանքում զբաղվածների 71,4%-ն աշխատել է լրիվ աշխատօրով, իսկ 14.4%-ը՝ ոչ լրիվ աշխատօրով: Ընդ որում, ոչ լրիվ աշխատաշաբաթով աշխատողների տեսակարար կշիռն ամենաբարձրը Սյունիքի մարզում էր (72,1%), Լոռու մարզում (64,3%) եւ Տավուշի մարզում (62,9%): Գործազրկությունը բարձր է հատկապես երիտասարդների շրջանում: Համաձայն Հայաստանի երիտասարդների ազգային զեկույցի՝ զբաղված երիտասարդների 56%-ը չի աշխատում իր մասնագիտությամբ, որը մարդկային կապիտալի որակական մեծ կորուստ է: Զբաղվածությունը ցածր է հատկապես բարձրլեռնային գյուղերում: Հանրապետությունում այժմ կա շուրջ 200.000 գործազուրկ, իսկ աշխատողների մի զգալի մասը իր մասնագիտությամբ չի աշխատում: Հենց դրանք են բնութագրում մարդկային կապիտալի իսկայական կորուստները:

Արտագաղթը մարդկային կապիտալի բացահայտ կորուստ է: Արտագաղթը մեր պատմության անբաժան մասն է: Այն զանգվածային բնույթ ընդունեց 1915թ. ցեղասպանության տարիներին: Հայաստանը փոքրացավ, բնակչության մի մասը տեղում կոտորվեց, մյուս մասը՝ անապատներում: Հայ մեծ պատմաբան Նիկողայոս Ադոնցը դառնացած գրեց. «Աշխարհը, այդ թվում եւ Խորհրդային Ռուսաստանը, անտարբեր մնաց այդ բոլորին, եւ Մեծ Հայաստանի փոխարեն «երազների բոցավառ խարույկից մնաց միայն մի աղքատ ճրագ, որ առկայծում է Արագածի ստորոտին, ավաղ՝ այնքան թույլ, որ նրա շողերը հազիվ են հասնում մինչեւ Արաքսի ջրերը եւ անզոր են լուսավորելու Մասիսի մռայլ ճակատը»: Ձեւավորվեց հայրենիքից դուրս հայկական Սփյուռքը, որում այսօր ապրում է աշխարհի 10 միլիոն հայերից շուրջ 7 միլիոնը: Ահա մեր ժողովրդագրական այսօրվա տխուր պատկերը: Ճիշտ է, 1921թ. մինչեւ 1973թ. Հայաստան ներգաղթեցին 200 հազարից ավելի մարդիկ, բայց հայրենադարձությունը հետագա զարգացումներ չունեցավ: Ընդհակառակը, 1988թ. երկրաշարժով եւ ԽՍՀՄ փլուզումով նորից զարգացան հակառակ միտումները: Երկրաշարժից 25.000 մարդ զոհվեց, իսկ 50.000-ը արտագաղթեցին: Դա բնական աղետից արտագաղթ էր: Դրան հաջորդեց Ղարաբաղյան հակամարտությունով եւ պատերազմով պայմանավորված արտագաղթը:

Արտագաղթի ծավալները մեծ չափերի հասան հատկապես 1992-1994 թվականներին: Երկրաշարժի ավերածություններին գումարվեց ատոմակայանի եւ «Նաիրիտ» արտադրական միավորման հանցավոր փակումը: Դա կաթվածահար արեց երկրի տնտեսությունը. փակվեցին հարյուրավոր ձեռնարկություններ, հազարավոր մարդիկ դարձան գործազուրկ՝ ապրելով առանց աշխատանքի եւ մթի պայմաններում: Հայաստանի բնակչության համար սոցիալ-հոգեբանական մեծ աղետ էր շուրջ 11 մլրդ ԱՄՆ դոլարին համարժեք ընտանիքների ավանդների սառեցումը: Այդ բոլորի հետեւանքով Հայաստանում միջին դաս, փոքր եւ միջին ձեռնարկատիրություն չկայացավ: Բնակչության հարստության եւ եկամուտների բեւեռացումը ահռելի չափեր ընդունեց: Ըստ 1998-1999 թվականների ՀՀ ազգային վիճակագրական ծառայության գնահատումների՝ 20% ամենաշատ եւ 20% ամենաքիչ ապահովված բնակչության եկամուտների տարբերությունը հասավ 32 անգամի (Ռուսաստանի Դաշնությունում 16 անգամի դիմաց): Այդ բոլորի հետեւանքով բնակչության 56%-ը դարձավ աղքատ, եւ ընդամենը երեք տարում շուրջ մեկ միլիոն մարդ երկրից արտագաղթեց: Վերադարձավ միայն 370 հազարը: 610 հազարը չվերադարձավ: Դա ազգային աղետ էր՝ մարդկային կապիտալի մեծ կորուստ:

Մեր եւ վերջին տարիներին մի շարք հետազոտություններով պարզ դարձավ, որ արտագաղթ կամ միգրացիա ծնող պատճառները շատացել են: Բացի աղքատությունից, աշխատատեղերի բացակայությունից՝ միգրացիայի լուրջ պատճառներ են դարձել աշխատավարձի ցածր մակարդակը, ապագայի անվստահությունը կամ անորոշությունը, կոռուպցիան, սոցիալական ընդգծված անարդարությունը եւ անպատժելիությունը, օրենքի բացակայությունը, հարստության ու եկամուտների գնալով աճող բեւեռացումը եւ այլն:

Որո՞նք են միգրացիոն հոսքերի ժամանակակից միտումները: Մինչեւ 2000-ական թվականները միգրացիան հիմնականում կարճաժամկետ էր, ընտանիքի մեկ կամ երկու անդամով՝ վերադառնալու ակնկալիքով: Ընտանիքի մայրը, որպես կանոն, արտերկիր չէր մեկնում, մնում էր տանը:

Ժամանակակից միգրացիան դառնում է երկարաժամկետ. ամբողջ ընտանիքով եւ անվերադարձ ակնկալիքով: Դրանք հիմնականում գնացած եւ վերադարձած միգրանտներն են, որոնց շուրջ 43%-ը նորից աշխատանք չի գտնում եւ ընտանիքի հետ անվերադարձ հեռանում է: Դա սոսկալի է, որը շարունակվելու դեպքում կարող է հայաթափել Հայաստանը:

Մասնավորապես ակտիվացել է դեպի արտերկիր երիտասարդության միգրացիոն վարքագիծը: Պրոբլեմի հետազոտողները ուսումնասիրել են մարդկանց երկրից դուրս մղող գործոնները, արտերկրի գրավիչ գործոնները եւ վերջապես Հայաստանում մնալու եւ ապրելու գրավիչ գործոնները: Պարզվել է, որ մարդկանց երկրից դուրս մղող գործոններն են աղքատությունը, գործազրկությունը, ցածր աշխատավարձը, հարստության ու եկամուտների ահռելի բեւեռացումը, համընդհանուր կոռուպցիան, օրենքով ապրելու վստահ համակարգի բացակայությունը, Ադրբեջանի բանակի հզորացումը, ապագայի նկատմամբ անվստահությունը:

Արտերկրի գրավիչ գործոններն են. աշխատատեղերի առկայությունը եւ բարձր աշխատավարձը, օրենքի գերակայությունը եւ սոցիալական արդար մթնոլորտը, որակյալ կրթություն ստանալու հնարավորությունը, հզորացած սփյուռքը:

Հայաստանում մնալու եւ ապրելու ռեալ ու միակ գործոնը հայրենիքն է. Հայաստան աշխարհը. մեր մշակույթը ու պատմությունը, մեր նախնիների սուրբ գերեզմանները: Այդ գործոնները դժբախտաբար տարբեր պատճառներով շատ թուլացած են դրսեւորվում եւ այսօր վճռող չեն:

Ժամանակակից միգրացիան շատացել է հատկապես սահմանամերձ եւ բարձրլեռնային գյուղերից: Դրանով մենք կորցնում ենք դարեր շարունակ մեր ժողովրդի գոյության հուսալի հենարանը՝ ավանդական գյուղը եւ ավանդական ընտանիքը:

Ժամանակակից միգրացիայի անցանկալի առանձնահատկություններից է նաեւ այն, որ հատկապես արտերկիր են ձգտում մեկնել բարձր որակավորման մասնագետները, գիտնականները՝ ակնկալելով այնտեղ ստանալ շատ բարձր աշխատավարձ: Կրթության մեծ ծախսերը կատարում է մեր պետությունը եւ ընտանիքը, իսկ դրանց բերած մեծ հասույթը ստանում է արտերկիրը:

Որոնք են արտագաղթը կանխելու ուղիները:

Հարկային եւ մաքսային բարեփոխումներով փոքր եւ միջին ձեռնարկատիրության համակողմանի զարգացումը:

Պետական օգնությամբ սահմանամերձ ու բարձրլեռնային բնակավայրերին հարկերից ազատելը, հայ գյուղի եւ նահապետական ընտանիքի ավանդույթների վերակենդանացումը:

«Ուղեղների արտահոսքի» կանխումը բարձր աշխատավարձով:

Կոռուպցիայի հաղթահարման միջոցով- պետության հեղինակության բարձրացումը եւ նրա հումանիստական քաղաքականությունը:

Բանակի մարտունակության մշտական բարձրացումը համընդհանուր խնայողության եւ շռայլ ծախսերը կրճատելու միջոցով: Հզոր բանակը ապագայի նկատմամբ ժողովրդի վստահության հիմնական երաշխիքն է:

Բնակչության հարստության եւ եկամուտների ահռելի բեւեռացման կրճատումը եւ արդարացի բաշխման հաստատումը:

Լուսավորության բոլոր միջոցներով, մշակույթով եւ արվեստով, կրթական ողջ համակարգով Հայաստանը սիրելու արդյունավետ ու նպատակասլաց քարոզչության իրականացումը:

Արտագաղթի հաղթահարումը ողջ ժողովրդի, ՀՀ Ազգային ժողովի, քաղաքական բոլոր կուսակցությունների, իշխանական բոլոր օղակների, հարգարժան վարչապետի սրբազան ու անհետաձգելի գործն է՝ Հայաստանի Հանրապետության մեծարգո նախագահի անմիջական գլխավորությամբ:

**Գ. ՂԱՐԻԲՅԱՆ**
**ՀՀԳԱԱ թղթակից անդամ,**
**ՀՀ գիտության վաստակավոր գործիչ,**
**Երեւանի պետական համալսարանի պրոֆեսոր**

# Հայաստանը Պուտինի եւ Էշթոնի միջեւ

Հայաստանն առաջին պետությունն է, որ վճարում է Արեւելք-Արեւմուտք նոր հակամարտության պատճառով: Բրյուսելը կովկասյան հանրապետությանը դրել է մի իրավիճակում, ուր նա պիտի ընտրություն կատարի՝ ԵՄ-ի կամ Ռուսաստանի միջոցով անվտանգություն, գրում է ավստրիական «Դեր Շտանդարդ» անկախ օրաթերթի մեկնաբան Մարկուս Բեռնաթը նոյեմբերի 6-ին՝ Երեւանում ստացած տպավորությունները փոխանցելով: Նախնական ուրվագիծն այժմ բաց տեղ ունի՝ 3 շաբաթ է մնացել Վիլնյուսում կայանալիք գագաթնաժողովին, իսկ ԵՄ-ը չգիտի՝ Հայաստանի հետ ինչից սկսի: «Չեմ հասկանում, ԵՄ հանձնաժողովի անդամների մասին կարծիք է հայտնում խոշոր գործարար Արսեն Ղազարյանը, ողջ Եվրոպան ռուսական շուկայի կարիքն ունի, ես էլ: Ի՞նչ իմաստ ունի Ռուսաստանի վրա հարձակվելը: Չի կարելի սառը պատերազմի բառապաշարով սերտ ինտեգրացիայի մասին խոսել», Արսեն Ղազարյանի դժգոհությունն է փոխանցում լրագրողը: 4 տարի հանձնաժողովն ու ԵՄ արտաքին քաղաքականության հանձնակատար Քեթրին Էշթոնը բանակցել են Ասոցիացման համաձայնագրի եւ ազատ առեւտրի գոտի մուտքի առիթով, ամռանն ամեն ինչ պատրաստ էր, հետո հայտնվեց Պուտինը, Հայաստանի նախագահին հրավիրեց նախկին ԽՍՀՄ պետությունների նոր ՄՄ: Հայաստանի նախագահն ընտրություն չուներ, համաձայնեց: Բրյուսելը պիտի սա իմանար: «Երբ հասնում ենք մի կետի, որ պիտի ընտրություն կատարենք, Հայաստանն իր անվտանգությունն ընտրելու տարբերակից այլ ընտրություն չունի», մեկնաբանում է Սամվել Ֆարմանյանը:

Էշթոնը բանակցությունների ընթացքում նախազգուշացրել էր, որ Ռուսական ՄՄ-ն համատեղելի չէ ԵՄ-ի ազատ առեւտրի գոտում անդամակցելու սկզբունքին: Բրյուսելի համար Հայաստանը զուտ 3 միլիոն բնակչությամբ փոքր շուկա է, թշնամական հարեւանների՝ Թուրքիայի եւ Ադրբեջանի միջեւ սեղմված, որոնք սահմանները փակ են պահում: Բայց քաղաքական վնասները պահելի են կարծես: Բրյուսելը՝ Մոսկվայի, շռայլ գաղափարները՝ կոշտ ուժային քաղաքականության դեմ: Սակայն Ռուսաստանը գազ ու բանակ ունի: Գյումրիում տեղակայված է ռուսական բանակի 102-րդ ռազմակայանը, ամենամեծը Հարավային Կովկասում: Հայերի համար ռուս զինվորները հոգեբանական բուֆեր են հարեւան Թուրքիայի դեմ, իսկ Ադրբեջանի ձեռնարկելիք պատերազմի պարագայում՝ ապահովագրում:

Հույս կա, թե Լեռնային Ղարաբաղի հակամարտության մեջ Մոսկվան հավանաբար կմիջամտի, եվրոպացիները ոչինչ չեն ձեռնակի: 2008-ին Կովկասյան պատերազմը Հայաստանի համար դաս է. Երբ Ռուսաստանը Վրաստան ներխուժեց, ԵՄ-ը սկզբում դիտում էր, այնուհետ խաղաղության պլան կազմեց, որին ցայսօր Մոսկվան չի հետեւում: «Եթե Հայաստանը նախորդ տարիներին ԵՄ-ից կամ ԱՄՆ-ից անվտանգության որեւէ երաշխիք ստացած լիներ, վիճակն այժմ հավանաբար այլ կլիներ», «Դեր Շտանդարդի» թղթակցին կարծիք է հայտնել Արեւմուտքում ծնված մի սփյուռքահայուհի, որ այժմ Երեւանում է աշխատում: «Անկեղծ լինենք՝ ԵՄ-ը Ղարաբաղի հարցի մասին երբեւէ չի հոգացել», իր մտահոգությունն է փոխանցել Նաիրա Զոհրաբյանը՝ հավելելով՝ «այն տպավորությունն ունեմ, թե ոմանք Բրյուսելում ճիշտ չեն հաշվարկել»: Հայաստանին ոչ մի դեպքում չպետք է մղել այն դրության, որ ստիպված լինի Եվրոպայի եւ Ռուսաստանի միջեւ ընտրություն կատարել: Ֆարմանյանը՝ Հանրապետական կուսակցության աճող քաղաքական երիտասարդ գործիչը, ԵՄ-ի նաեւ ուրիշ ձախողում է մատնանշում: Նա Անկարայի վրա պիտի ճնշում գործադրեր, որ 2009-ին Հայաստանի հետ բնականոն հարաբերությունների մասին պայմանագիրը նաեւ վավերացներ եւ իրականացներ: «Եթե Թուրքիան բացեր սահմանը, տարածաշրջանի աշխարհաքաղաքական, ինտեգրացիոն ողջ գործընթացը կփոխվեր», Ֆարմանյանի խոսքն է փոխանցում է ավստրիական օրաթերթը՝ հիշեցնելով, որ Թուրքիան, ի նշան Ադրբեջանին իր համերաշխության, 20 տարի առաջ՝ Ղարաբաղյան պատերազմի ժամանակ փակել է Հայաստանի հետ սահմանը: «Ինձ ցավ է պատճառում, որ ԵՄ-ի հետ մեր համագործակցությունը տկարացել է», ասում է Նաիրա Զոհրաբյանը, մեր տեղը եվրոպական ընտանիքում է»: Պուտինի ՄՄ-ն, որին այժմ Ռուսաստանի հետ Բելառուսն ու Ղազախստանն են անդամակցում, Երեւանում բազմաթիվ քաղաքական գործիչների, հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչների համար Հայաստանի հետագա ժողովրդավարացման համար ոչ թե մոդել է, այլ՝ լճացում: Ոմանք, ինչպես Հերմինե Նաղդալյանը, հակառակ կարծիքն ունեն. «Մեր ապրանքներն առավել կէժանանան»: Հայաստանի տնտեսության կեսը կախյալ է Ռուսաստանից. արտահանման մեկ երրորդից ավելին առաքվում է ԵՄ, մեկ հինգերորդը՝ Ռուսաստան: Արսեն Ղազարյանը քննադատում է ԵՄ- ՄՄ առճակատումը: «Ինչո՞ւ են պարիսպ բարձրացնում երկու կառույցների միջեւ: Տնտեսապես իմաստ չունի, քաղաքական իմաստով՝ Բրյուսելում ոմանց համար՝ միգուցե: Ինչ Հայաստանի համար նշանակություն ունի, նույնքան ճիշտ է առավել մեծ Ուկրաինայի համար: Ռուսական շուկայից կախվածությունը փաստ է: Եթե Ուկրաինան միայն ԵՄ ազատ առեւտրի գոտուն անդամակցի, շատ հեշտ կարելի է հաշվարկել, որ մեկ տարում նրա տնտեսության կեսը կփլուզվի: ԵՄ հանձնաժողովում որեւէ մեկը դրա համար պատասխանատվություն չի ստանձնի»:

«Պայքար Ուկրաինայի համար»՝ սա է Երեւանում Արեւելք-Արեւմուտք նոր հակամարտության նյութը: Հայաստանն առաջինը վճարեց: Սրանից հետո ինչպե՞ս պիտի շարունակվի: «ԵՄ տանող դուռը փակ է, բայց ոչ կողպված», կարծում է Ֆարմանյանը՝ ենթադրելով, թե Վիլնյուսում նոյեմբերի վերջին կայանալիք գագաթնաժողովին Եվրոմիության եւ Հայաստանի միջեւ փաստաթուղթ կստորագրվի: Նմանատիպ անորոշ հույսեր տածում է նաեւ բրյուսելյան հանձնաժողովը, եզրափակում է ավստրիական օրաթերթը: Մի հավելում եւս՝ հոդվածին կից Արարատի լուսանկարն է՝ այսպիսի համեմատությամբ՝ «Եվրոմիությունն էլ Հայաստանի համար Արարատի նման է՝ ձեռք մեկնելու չափ մոտ, բայց անհասանելի»:

**ԱՆԱՀԻՏ ՀՈՎՍԵՓՅԱՆ**
Գերմանիա

ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ԱՆԴԱՄ

## ՄԱԿ-ի ԱԽ-ում սաուդցիներին կփոխարինի Հորդանանը



**ՄԱԿ-ի ԱԽ ժամանակավոր անդամ ընտրված եւ ԱԽ-ում այդ տեղից հրաժարված Սաուդյան Արաբիային կփոխարինի Հորդանանը: Այդ մասին հաղորդում է Ասոշիեյթեդ պրես գործակալությունը, վկայակոչելով ՄԱԿ-ում աշխատող մի «անանուն» դիվանագետի:**

**Գործակալության աղբյուրի խոսքերով, ՄԱԿ-ում Հորդանանի ներկայացուցիչը արդեն Նյու Յորք է թռել թագավորության նոր դերի շուրջը բանակցելու: Հորդանանի թեկնածությունը դեռ պետք է հաստատվի ՄԱԿ-ի Ընդհանուր ժողովում, սակայն ուրիշ թեկնածուների բացակայությունն արդեն կանխորոշել է քվեարկության արդյունքը:**

**Սպասվում է, որ Սաուդյան Արաբիան իր հերթին կմտնի ՄԱԿ-ի Մարդու իրավունքների խորհրդի կազմի մեջ: Ավելի վաղ Հորդանանը հրաժարվել էր պայքարել այդ մարմնում տեղ զբաղեցնելու համար՝ էապես մեծացնելով սաուդցիների հնարավորությունները:**

**Ընդհանուր ժողովը Սաուդյան Արաբիային ԱԽ ժամանակավոր անդամ էր ընտրել հոկտեմբերի 17-ին, սակայն հաջորդ օրը սաուդցիների արտործնախարար Սաուդ ալ-Ֆեսալը հայտարարել էր, որ իր թագավորությունը հրաժարվում է այդ տեղից: Էր-Ռիադում դա պարզաբանել էին նրանով, որ ՄԱԿ-ի ԱԽ-ն «անկարող է ավարտել պատերազմները եւ հարթել հակամարտությունները», իսկ աշխատանքի երկակի չափանիշներն ու մեխանիզմները ի չիք են դարձնում ողջ աշխարհում խաղաղություն հաստատելու ԱԽ ջանքերը:**

**Էր-Ռիադի դժգոհության գլխավոր պատճառը Սիրիայի պատերազմին եւ պաղեստինա-իսրայելական հակամարտությանը վերջ դնելու ԱԽ անկարողությունն է: Բացի դրանից, ՄԱԿ-ին այդպես էլ չհաջողվեց հասնել Մերձավոր Արեւելքում միջուկազերծ գոտում ստեղծմանը նվիրված կոնֆերանսի հրավիրմանը:**

**ՄԱԿ-ի ԱԽ-ում 15 տեղերից 5-ը մշտական են, իսկ 10 ժամանակավոր տեղերը երկու տարին մեկ բաշխվում են ռոտացիոն սկզբունքով:**

Պ. Ք.

## Պակիստանցի թալիբների նոր առաջնորդը դեմ է երկխոսությանը



**«Թալիբան» շարժման պակիստանյան մասնաճյուղի ղեկավար խորհրդի անդամները ընտրել են կազմակերպության նոր առաջնորդ, հաղորդում է Ռոյթեր գործակալությունը:**

**Քվեարկության արդյունքների հիման վրա պակիստանցի թալիբների իմամի պաշտոնում ընտրվել է դաշտային հրամանատար Մուլլա Ֆազլուլլահը: Նա հայտնի է 2007 թ. Սվաթի հովտում իշխանության զավթման գործողությամբ: Հատկապես հրավիրված մամլո ասուլիսում Ֆազլուլլահի հաղթանակի մասին հայտարարել է «Թալիբանի» առաջնորդի խոսնակ Ասմատուլլահ Շահինը:**

**Մուլլա Ֆազլուլլահը Սվաթի հովտում կառավարել է մինչեւ 2009 թվականը, երբ անցկացվեց Պակիստանի հյուսիսարեւելյան այդ շրջանից թալիբների արտաքսման բանակային գործողություն: Տեղաբնակները պատմում են, որ 2007-2009 թթ. Ֆազլուլլահը կանոնավորապես հրկիզում էր դպրոցները եւ գլխատում նրանց, ովքեր համաձայն չէին իսլամի իր մեկնաբանությանը:**

**«Թալիբանի» առաջնորդ ընտրվելուց հետո նրա արած առաջին իսկ հայտարարություններից մեկը հրաժարումն է Պակիստանի կառավարության հետ հաշտության բանակցություններից: Նոր առաջնորդի պաշտոնական ներկայացուցիչ Շահիդուլլահ Շահիդի խոսքերով, Ֆազլուլլահը մերժում է իշխանությունների հետ երկխոսություն վարելու բուն գաղափարը:**

**Պակիստանցի թալիբների առաջնորդի պաշտոնը թափուր էր դարձել նոյեմբերի 1-ին այն բանից հետո, երբ Ֆազլուլլահին նախորդած Հաքիմուլլա Մեհսուդը սպանվել էր ամերիկյան անօդաչու ինքնաթիռի հարվածից:**

Պ. Ք.

# Հոբելյանական համերգ՝ նվիրված Մարտին Վարդազարյանի ծննդյան 75-ամյակին




**Ալ. Սպենդիարյանի անվան օպերայի եւ բալետի ազգային ակադեմիական թատրոնում նոյեմբերի 14-ին տեղի կունենա հոբելյանական երեկո՝ նվիրված ՀՀ ժողովրդական արտիստ, Երեւանի պատվավոր քաղաքացի, Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի սիմֆոնիկ նվագախմբի վետերան, տաղանդավոր կոմպոզիտոր Մարտին Վարդազարյանի ծննդյան 75-ամյակին:**

**Երեկոյի ընթացքում կհնչեն հեղինակի կամերային-սիմֆոնիկ, ինչպես նաեւ էստրադային եւ ջազային ստեղծագործությունները: Հանդես կգան Հանրային ռադիոյի եւ հեռուստատեսության էստրադային-սիմֆոնիկ նվագախումբը (գեղարվեստական ղեկավար Երվանդ Երզնկյան), Հայաստանի պետական երիտասարդական նվագախումբը (գեղարվեստական ղեկավար Ս. Սմբատյան), Երեւանի պետական կամերային երգչախումբը (գեղարվեստական ղեկավար Հ. Թոփիկյան), Երեւանի պարարվեստի պետական քոլեջի սաները, ինչպես նաեւ մենակատարներ Ռաիսա Մկրտչյանը, Արուս Աճեմյանը, Արտաշես Գրիգորյանը, Աննա Վարդազարյանը, Լուսինե Կչոզյանը, Արթուր Իսպիրյանը:**

**Համերգը կազմակերտել է ՀՀ մշակույթի նախարարությունը:**

**Մ. Հ.**

# «Նավասարդյան խաղերում» կմրցեն 310 մասնակիցներ

Օրերս մեկնարկեց «Նավասարդյան խաղերի» աշնանային մրցաշրջանը:

«Նավասարդյան խաղերը» Հայաստանի ազգային հարուստ ավանդույթների եւ մերօրյա մշակույթի միջեւ յուրօրինակ մի կամուրջ են, նախաձեռնություն, որը միտված է բացահայտելու եւ աջակցելու շնորհալի պատանիներին եւ երիտասարդներին, ինչպես նաեւ նպաստելու նոր սերնդի ներգրավվածությանը արվեստի տարբեր ոլորտներում: «Նավասարդյան խաղերի» նպատակն է ազգային մշակութային ավանդույթների պահպանումն ու սերունդներին փոխանցելու շարունակականության ապահովումը:

Առաջին «Նավասարդյան խաղերում» ընդգրկված է 36 անվանակարգ, որոնք ներկայացնում են ավանդական եւ արդի արվեստի, արհեստների գրեթե բոլոր ոլորտները: Խաղերը կիրականացվեն փուլային սկզբունքով, տարվա եղանակներին համահունչ (աշուն, ձմեռ, գարուն, ամառ):

Խաղերը մեկնարկեցին Առնո Բաբաջանյան համերգասրահում՝ «Փողային գործիքներ» անվանակարգի մրցութային առաջին փուլով: Խաղերի աշնանային մրցաշրջանն իրականացվում է 12 անվանակարգում. «Փողային գործիքներ», «Ժողովրդական նվագարաններ», «Էստրադային երգեցողություն», «Ժողովրդական պար», «Մնջախաղ» «Կերպարվեստ», «Ժողովրդական եւ դեկորատիվ կիրառական արվեստ«, «Ասմունք», «Կրկեսային արվեստ», «Հագուստի դիզայն», «Ակադեմիական երգեցողություն», «Դասական պար»:

Վերոնշյալ անվանակարգերում ստացվել է 310 մասնակցության հայտ Երեւանից, ՀՀ 7 մարզերից եւ ԼՂՀ -ից:

«Նավասարդյան խաղերը» կանցկացվեն մրցութային երկու փուլով, երկու տարիքային խմբում կրտսեր եւ ավագ, իսկ մասնակիցների նվազագույն տարիքը 10 տարեկանն է, առավելագույնը 25:

«Նավասարդյան խաղերի» յուրաքանչյուր անվանակարգի համար ձեւավորվել է մրցութային հանձնաժողով, որոնց կազմում ընդգրկված են հանրապետության լավագույն մասնագետները:

Աշնանային խաղերի մրցանակաբաշխության արարողությունը տեղի կունենա Գյումրիում, Վ. Աճեմյանի անվան պետական դրամատիկական թատրոնում, դեկտեմբերին: Այնուհետեւ, Երեւանում, դեկտեմբերի 28-ին, Ալ. Սպենդիարյանի անվան օպերայի եւ բալետի ազգային ակադեմիական թատրոնում մրցանակակիրների մասնակցությամբ տեղի կունենա «Նավասարդյան խաղերի» թատերահամերգային բեմականացումը, որով եւ կազդարարվեն աշնանային մրցաշրջանի փակումը եւ ձմեռային մրցաշրջանի բացումը:

«Նավասարդյան խաղերը» ներառված են նաեւ «Գյումրին 2013 թ. ԱՊՀ մշակութային մայրաքաղաք» ծրագրի շրջանակներում:

ՄԱՆԱՆԱ ՀՈՎԱԿԻՄՅԱՆ


## ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

**ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԳՈՒՅՔԸ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԵՎ ՕՏԱՐՄԱՆ ԱՃՈՒՐԴԸ ԵՎ ՄՐՑՈՒՅԹԸ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՂ ՈՒ ԱՆՑԿԱՑՆՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԸ ՀԱՅՏԱՐԱՐՈՒՄ Է ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՆԵՐՔՈՀԻՇՅԱԼ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ**

| h/h | Գույքի հասցեն (գտնվելու վայրը) | Գույքի մակերեսը | Գույքի օգտագործման նպատակը | Վարձակալության տրամադրման ժամկետը | Մեկնարկային գինը (վարձավճարի չափը 1 ամսվա համար) |
|---|---|---|---|---|---|
| *Աճուրդով վարձակալության տրամադրվող գույք* | | | | | |
| 1 | Արմենակյան փողոց h.141, 2-րդ հարկ | 7.9 | հասարակական | 5 տարի | 7900 դրամ |

Աճուրդին կարող են մասնակցել իրավաբանական եւ ֆիզիկական այն անձիք, ովքեր Երեւան համայնքի բյուջեի նկատմամբ օրենքով սահմանված կարգով ֆինանսական պարտավորություններ չունեն:

Աճուրդին մասնակցել ցանկացող անձինք աճուրդի կազմակերպման եւ անցկացման ընթացակարգին կարող են ծանոթանալ Երեւանի քաղաքապետարանում, ինչպես նաեւ Երեւանի քաղաքապետարանի ինտերնետային կայքում՝ WWW.YEREVAN.AM:

Աճուրդի պայմանների մանրամասներին, պայմանագրի տիպային օրինակին ծանոթանալու ու հայտ ներկայացնելու համար դիմել Երեւանի քաղաքապետարան (Արգիշտի 1, մուտքը աշտարակի կողմից, 2-րդ հարկ, հեռ. 514173):

Աճուրդին մասնակցել ցանկացողները հայտին կից ներկայացնում են տեղական վճարի՝ 10000 դրամ եւ մեկնարկային գնի 5%-ի չափով նախավճարի վճարման անդորրագրերը:

Աճուրդը կայանալու է 2013թ նոյեմբերի 26-ին ժամը16-ին , ք. Երեւան, Արգիշտի 1 հասցեում:

Հայտերն ընդունվում են աշխատանքային օրերին՝ մինչեւ 2013թ նոյեմբերի 26-ը, ժամը14-ը:

***ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԳՈՒՅՔԸ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԵՎ ՕՏԱՐՄԱՆ ԱՃՈՒՐԴԸ ԵՎ ՄՐՑՈՒՅԹԸ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՂ ՈՒ ԱՆՑԿԱՑՆՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ***

## ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

**ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԳՈՒՅՔԸ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԵՎ ՕՏԱՐՄԱՆ ԱՃՈՒՐԴԸ ԵՎ ՄՐՑՈՒՅԹԸ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՂ ՈՒ ԱՆՑԿԱՑՆՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԸ ՀԱՅՏԱՐԱՐՈՒՄ Է ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՆԵՐՔՈՀԻՇՅԱԼ ԳՈՒՅՔԻ ՕՏԱՐՄԱՆ ԱՃՈՒՐԴ**

| h/h | Գույքի անվանումը | Պետհամարանիշը | Թողարկման տարեթիվը | Մեկնարկային գինը (դրամ) |
|---|---|---|---|---|
| 1 | ՄԱԶ 5334 (ԿՍ-3577 Կռունկ) | 087 LS 63 | 1989թ | 1,800,000 |
| 2 | Ֆոլկսվագեն տուարեգ | 100 SL 08 | 2007թ | 10,440,000 |

Աճուրդին կարող են մասնակցել այն իրավաբանական և ֆիզիկական անձինք, որոնք Երևան համայնքի նկատմամբ օրենքով սահմանված կարգով ֆինանսական պարտավորություններ չունեն:

Աճուրդին մասնակցել ցանկացող անձինք աճուրդի կազմակերպման և անցկացման ընթացակարգին կարող են ծանոթանալ Երևանի քաղաքապետարանում, ինչպես նաև Երևանի քաղաքապետարանի ինտերնետային կայքում՝ WWW.YEREVAN.AM:

Աճուրդի պայմանների մանրամասներին, պայմանագրի տիպային օրինակին ծանոթանալու ու հայտ ներկայացնելու համար դիմել Երևանի քաղաքապետարան (Արգիշտի 1, մուտքը աշտարակի կողմից, 2-րդ հարկ, հեռ. 514173):

Աճուրդին մասնակցել ցանկացողները հայտին կից ներկայացնում են տեղական վճարի՝ 10000 դրամ և մեկնարկային գնի 5%-ի չափով նախավճարի վճարման անդորրագրերը:

Աճուրդը կայանալու է 2013թ նոյեմբերի 26-ին ժ.16.00-ին, ք. Երևան, Արգիշտի 1 հասցեում:

Հայտերն ընդունվում են աշխատանքային օրերին՝ մինչև 2013թ նոյեմբերի 26-ը, ժամը 14.00-ը:

***ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԳՈՒՅՔԸ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԵՎ ՕՏԱՐՄԱՆ ԱՃՈՒՐԴԸ ԵՎ ՄՐՑՈՒՅԹԸ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՂ ՈՒ ԱՆՑԿԱՑՆՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ***

## ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

**ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԳՈՒՅՔԸ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԵՎ ՕՏԱՐՄԱՆ ԱՃՈՒՐԴԸ ԵՎ ՄՐՑՈՒՅԹԸ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՂ ՈՒ ԱՆՑԿԱՑՆՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԸ ՀԱՅՏԱՐԱՐՈՒՄ Է ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՆԵՐՔՈՀԻՇՅԱԼ ԳՈՒՅՔԻ ՕՏԱՐՄԱՆ ԱՃՈՒՐԴ**

| h/h | Գույքի հասցեն (գտնվելու վայրը) | Գույքի օգտագործման նպատակը | Շինության մակերեսը /քմ/ | Մեկնարկային գինը (դրամ) |
|---|---|---|---|---|
| 1 | Սիսակյան փողոց 22 շենք, թիվ 1 | Ավտոկայանատեղի | 13.23 | 1,692,000 |
| 2 | Սիսակյան փողոց 22 շենք, թիվ 2 | Ավտոկայանատեղի | 14.46 | 1,827,000 |
| 3 | Սիսակյան փողոց 22 շենք, թիվ 3 | Ավտոկայանատեղի | 14.46 | 1,827,000 |
| 4 | Սիսակյան փողոց 22 շենք, թիվ 4 | Ավտոկայանատեղի | 14.46 | 1,827,000 |
| 5 | Սիսակյան փողոց 22 շենք, թիվ 5 | Ավտոկայանատեղի | 14.46 | 1,827,000 |
| 6 | Սիսակյան փողոց 22 շենք, թիվ 6 | Ավտոկայանատեղի | 13.48 | 1,710,000 |
| 7 | Սիսակյան փողոց 22 շենք, թիվ 7 | Ավտոկայանատեղի | 14.46 | 1,827,000 |
| 8 | Սիսակյան փողոց 22 շենք, թիվ 8 | Ավտոկայանատեղի | 14.46 | 1,827,000 |
| 9 | Սիսակյան փողոց 22 շենք, թիվ 9 | Ավտոկայանատեղի | 14.46 | 1,827,000 |
| 10 | Սիսակյան փողոց 22 շենք, թիվ 10 | Ավտոկայանատեղի | 14.46 | 1,827,000 |
| 11 | Սիսակյան փողոց 22 շենք, թիվ 11 | Ավտոկայանատեղի | 14.46 | 1,827,000 |
| 12 | Սիսակյան փողոց 22 շենք, թիվ 12 | Ավտոկայանատեղի | 14.46 | 1,827,000 |
| 13 | Սիսակյան փողոց 22 շենք, թիվ 13 | Ավտոկայանատեղի | 14.46 | 1,827,000 |
| 14 | Սիսակյան փողոց 22 շենք, թիվ 14 | Ավտոկայանատեղի | 14.46 | 1,827,000 |
| 15 | Սիսակյան փողոց 22 շենք, թիվ 15 | Ավտոկայանատեղի | 19.98 | 2,547,000 |
| 16 | Սիսակյան փողոց 22 շենք, թիվ 16 | Ավտոկայանատեղի | 19.98 | 2,547,000 |
| 17 | Սիսակյան փողոց 22 շենք, թիվ 17 | Ավտոկայանատեղի | 19.98 | 2,547,000 |
| 18 | Սիսակյան փողոց 22 շենք, թիվ 18 | Ավտոկայանատեղի | 19.98 | 2,547,000 |
| 19 | Սիսակյան փողոց 22 շենք, թիվ 19 | Ավտոկայանատեղի | 20.29 | 2,592,000 |
| 20 | Սիսակյան փողոց 22 շենք, թիվ 20 | Ավտոկայանատեղի | 19.98 | 2,547,000 |
| 21 | Սիսակյան փողոց 22 շենք, թիվ 21 | Ավտոկայանատեղի | 19.98 | 2,547,000 |
| 22 | Սիսակյան փողոց 22 շենք, թիվ 22 | Ավտոկայանատեղի | 19.98 | 2,547,000 |
| 23 | Սիսակյան փողոց 22 շենք, թիվ 23 | Ավտոկայանատեղի | 19.98 | 2,547,000 |
| 24 | Սիսակյան փողոց 22 շենք, թիվ 24 | Ավտոկայանատեղի | 19.98 | 2,547,000 |
| 25 | Սիսակյան փողոց 22 շենք, թիվ 25 | Ավտոկայանատեղի | 19.98 | 2,547,000 |

Աճուրդին կարող են մասնակցել այն իրավաբանական և ֆիզիկական անձինք, որոնք Երևան համայնքի նկատմամբ օրենքով սահմանված կարգով ֆինանսական պարտավորություններ չունեն:

Աճուրդին մասնակցել ցանկացող անձինք աճուրդի կազմակերպման և անցկացման ընթացակարգին կարող են ծանոթանալ Երևանի քաղաքապետարանում, ինչպես նաև Երևանի քաղաքապետարանի ինտերնետային կայքում՝ WWW.YEREVAN.AM:

Աճուրդի պայմանների մանրամասներին, պայմանագրի տիպային օրինակին ծանոթանալու ու հայտ ներկայացնելու համար դիմել Երևանի քաղաքապետարան (Արգիշտի 1, մուտքը աշտարակի կողմից, 2-րդ հարկ, հեռ. 514173):

Աճուրդին մասնակցել ցանկացողները հայտին կից ներկայացնում են տեղական վճարի՝ 10000 դրամ և մեկնարկային գնի 5%-ի չափով նախավճարի վճարման անդորրագրերը:

Աճուրդը կայանալու է 2013թ նոյեմբերի 26-ին ժ.16.00-ին , ք. Երևան, Արգիշտի 1 հասցեում:

Հայտերն ընդունվում են աշխատանքային օրերին՝ մինչև 2013թ. նոյեմբերի 26-ը, ժամը 14.00-ը:

***ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԳՈՒՅՔԸ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԵՎ ՕՏԱՐՄԱՆ ԱՃՈՒՐԴԸ ԵՎ ՄՐՑՈՒՅԹԸ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՂ ՈՒ ԱՆՑԿԱՑՆՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ***

## Վաճառվում է

ավտոմեքենա «Daewoo Matiz» 2009 թ., փոխանցման տուփը՝ մեխ., շարժիչը՝ 0,8 լ բենզին, վազքը՝ 93000 կմ, CDMP3 մագնիտաֆոն «Clarion», անվադողերը նոր են, մեքենան գտնվում է գերազանց վիճակում: Գինը՝ 3700 $-ին համարժեք դրամ: Հեռ. (077) 700-710:

## ՎԱՃԱՌՎՈՒՄ Է

**չեխական «Կարմա» գազի վառարան: Հեռ.՝ 094-48-68-03**

## ՎԱՃԱՌՎՈՒՄ Է

4 սեն. բնակարան Եր. Քոչարի փ. (եկեղեցու մոտ, 16/11 հ., 103 քմ), մշտ. ջուր, հին վերանորոգում, փոխված էլ. լարեր, 2 պատշգամբ, գեղեցիկ տեսարան, արեւկող, գինը՝ պայմանագրային: Հեռ.՝ 093-505-807, (010) 222-730

# Պատանի հայ բռնցքամարտիկները կվիճարկեն Եվրոպայի առաջնության տիտղոսները

Անապայում մեկնարկող բռնցքամարտի Եվրոպայի պատանեկան առաջնության տիտղոսները վիճարկող 26 երկրների 185 պատանի բռնցքամարտիկների թվում են նաեւ Հայաստանի 10 մարզիկներ: Մեր պատանի բռնցքամարտիկները ուժերի այս ստուգատեսին նախապատրաստվել են Աբովյանի մարզահամալիրում հավաքականի գլխավոր մարզիչ Արման Հարությունյանի գլխավորությամբ: Ըստ մարզչի, մեր բռնցքամարտիկներն անհրաժեշտ տեխնիկատակտիկական պատրաստվածություն ունեն ու պատրաստ են պայքարելու մրցանակային տեղերի համար:

Հարկ է նշել, որ Եվրոպայի առաջնությանը մասնակցող մեր բռնցքամարտիկներից շատերը մրցակցային զգալի փորձ ունեն: Սեպտեմբերին նրանք մասնակցել են Կիեւում անցկացված բռնցքամարտի աշխարհի պատանեկան առաջնությանը:



Ռինգ դուրս եկած 8 բռնցքամարտիկներից 2-ը Կիեւում դարձան մրցանակակիրներ: Մինչեւ 50 կգ քաշային կարգում Հրայր Շահվերդյանը հասավ մինչեւ եզրափակիչ, որտեղ 0-3 հաշվով պարտվեց կուբացի Մայքլ Բարերոյին ու հռչակվեց աշխարհի փոխչեմպիոն: Իսկ գերծանրքաշային Արամ Աբրահամյանը բավարարվեց բրոնզե մեդալով՝ կիսաեզրափակիչում զիջելով Բելառուսի ներկայացուցիչ Մաքսիմ Կոզլովին:

Հուսանք, որ Եվրոպայի առաջնությունում էլ մեր պատանի բռնցքամարտիկներին կհաջողվի մեդալներ նվաճել:

# Կառլեն Մկրտչյանը հաղթանակ պարգեւեց «Անժիին»



Ֆուտբոլի Եվրոպայի լիգայի խմբային մրցաշարի 4-րդ տուրում K խմբում հանդես եկող Մախաչկալայի «Անժին» հյուրընկալվելիս անչափ կարեւոր հաղթանակ տոնեց նորվեգական «Տրոմսեի» նկատմամբ: Ուրախալի է, որ խաղի ելքը վճռած միակ գոլի հեղինակը Կառլեն Մկրտչյանն է, որն ավելացված ժամանակի 3-րդ րոպեին գրավեց մրցակցի դարպասը: Այդ խաղում Մկրտչյանը հանդես եկավ իրեն անսովոր դիրքում՝ կիսապաշտպանության եզրում:

Այս հաղթանակի շնորհիվ «Անժին» 7 միավորով ընթանում է 2-րդ տեղում եւ իրական հնարավորություն ունի դուրս գալու 1/16 եզրափակիչ: 2 միավոր է վաստակել 3-րդ տեղում ընթացող «Շերիֆը», որը Լոնդոնում 1-2 հաշվով զիջեց «Տոտենհեմին»:

Կարագանդայի «Շախտյորը», որի կազմում էր Գեւորգ Ղազարյանը, հյուրընկալվելիս 0-1 հաշվով պարտվեց հոլանդական «Ալկմարին»: L խմբում հանդես եկող «Շախտյորը» գործնականում կորցրեց պայքարը շարունակելու հնարավորությունը: Թիմը 2 միավորով 3-րդ տեղում է: 8-ական միավոր ունեն ՊԱՕԿ-ն ու «Ալկմարը»: ՊԱՕԿ-ը գոլազուրկ ոչ-ոքի խաղաց Հայֆայի «Մաքաբիի» հետ:

G խմբում հանդես եկող Կիեւի «Դինամոն» մրցակցի հարկի տակ 2-0 հաշվով հաղթեց շվեյցարական «Թունին»: «Դինամոն» 7 միավորով 2-րդ տեղում է: Առջեւում բելգիական «Գենկն» է, որը հյուրընկալվելիս ոչ-ոքի (2-2) խաղալով ավստրիական «Ռապիդի» հետ, վաստակեց 8 միավոր:

D խմբում հանդես եկող Կազանի «Ռուբինը» սեփական հարկի տակ անչափ կարեւոր հաղթանակ տոնեց «Վիգանի» նկատմամբ (1-0) եւ 10 միավորով ամրապնդեց առաջատարի դիրքը: «Վիգանն» ունի 5 միավոր: 4 միավոր է վաստակել «Զուլտե Վարեգեմը», որը Սլովենիայում հաղթեց «Մարիբորին»:

A խմբում «Կուբանը» Կրասնոդարում ոչ-ոքի (1-1) խաղաց անգլիական «Սուոնսիի» հետ: Վերջինս վաստակեց 8 միավոր, «Կուբանը» 2 միավորով եզրափակում է աղյուսակը: Առաջատարը «Վալենսիան» է, որը 3-2 հաշվով հաղթելով «Սանկտ Գալենին», վաստակեց 9 միավոր:

C խմբում հայտնի են 2 ուղեգրերի տերերը: Պայքարը կշարունակեն ավստրիական «Զալցբուրգն» ու դանիական «Էսբերգը»: «Զալցբուրգը» մրցակցի հարկի տակ 3-1 հաշվով հաղթեց բելգիական «Ստանդարտին», իսկ «Էսբերգը» սեփական դաշտում 1-0 հաշվով պարտության մատնեց շվեդական «Էլֆսբորգին»:

E խմբում եւս հայտնի են ուղեգրերի տերերը: Իտալական «Ֆիորենտինան» ու Դնեպրոպետրովսկի «Դնեպրը» ժամկետից շուտ հաջորդ փուլում են: «Դնեպրը» սեփական հարկի տակ 2-0 հաշվով հաղթեց «Պասուշին», իսկ «Ֆիորենտինան» հյուրընկալվելիս առավելության հասավ «Պանդուրիի» նկատմամբ (2-1):

Մյուս խմբերում պայքարն ուղեգրերի համար դեռ շարունակվելու է: Ահա կայացած մյուս հանդիպումների արդյունքները. «Սեւիլիա»-«Սլովան»՝ 1-1, «Էշտորիլ»-«Ֆրայբուրգ»՝ 0-0, «Ռիեկա»-«Լիոն»՝ 1-1, «Վիկտորիա»-«Բետիս»՝ 0-1, «Լեգիա»-«Տրաբզոնսպոր»՝ 0-2, «Լազիո»-«Ապոլոն»՝ 2-1, «Էյնդհովեն»-«Դինամո» Զագրեբ՝ 2-0, «Լուդոգորեց»-«Չեռնոմորեց»՝ 1-1, «Ապոել»-«Բորդո»՝ 2-1, «Մաքաբի» Թել Ավիվ-«Այնտրախտ»՝ 4-2:

# Մովսիսյանի գոլը լավագույնն է առաջին շրջանում

Sportbox.ru կայքում անցկացված հարցման արդյունքներով ՀՀ հավաքականի եւ Մոսկվայի «Սպարտակի» հարձակվող Յուրա Մովսիսյանի՝ «Կուբանի» դարպասը խփած գնդակը ճանաչվել է ՌԴ պրեմիեր լիգայի առաջին շրջանի լավագույն գոլ:

Մովսիսյանն ընթացիկ առաջնությունում արդյունավետ է գործում՝ 14 խաղում խփելով 9 գնդակ: Այդ ցուցանիշով նա առաջնության լավագույն ռմբարկուների ցանկում 3-րդ տեղում է:



# Կասպարովը կանխատեսում է Կառլսենի հաղթանակը

**Այսօր Հնդկաստանի Չեննայ քաղաքում կտրվի շախմատի աշխարհի առաջնության Անանդ-Կառլսեն մրցախաղի մեկնարկը: Առաջին պարտիայում սպիտակներով կխաղա աշխարհի թագի հավակնորդ Մագնուս Կառլսենը: Մրցակարգի համաձայն, մրցակիցները կանցկացնեն 12 պարտիա: Մրցախաղը կդադարեցվի, եթե մրցակիցներից որեւէ մեկը ժամկետից շուտ վաստակի 6,5 միավոր: Հավասար արդյունքի դեպքում նոյեմբերի 28-ին Անանդն ու Կառլսենը լրացուցիչ մրցախաղ կանցկացնեն: Սկզբում կանցկացվի 4 պարտիայից բաղկացած արագ շախմատի մրցաշար: Եթե դա էլ հաղթողին չորոշի, ապա մրցակիցները կանցկացնեն կայծակնային 2 պարտիա: Հավասար արդյունքի դեպքում առավելագույնը կանցկացվի կայծակնային 10 պարտիա: Իսկ հարկ եղած դեպքում չեմպիոնը կորոշվի կայծակնային 11-րդ պարտիայում, որում ոչ-ոքի գրանցվելու դեպքում հաղթանակը կշնորհվի սեւ խաղաքարերով խաղացող շախմատիստին:**

**Առաջիկա մրցախաղի մասին իր կարծիքն է հայտնել աշխարհի 13-րդ չեմպիոն Գարի Կասպարովը. «Եթե մրցախաղում հաղթի Անանդը, ապա նա շախմատային Օլիմպոսում իր համար կպահպանի բարձրագույն տեղը: Սակայն ես կանխագուշակում եմ Կառլսենի հաղթանակը՝ հաշվի առնելով նրա տաղանդը եւ վերջին տարիներին ցույց տված արդյունքները: Երկրպագում եմ Կառլսենին, քանի որ շախմատային նոր սերունդը նոր չեմպիոնի է արժանի: Եվ ամենակարեւորը, սպասում եմ, որ ականատես կլինենք բարձրակարգ պարտիաների եւ անզիջում մրցապայքարի: Հուսով եմ, որ շախմատային 2 լեգենդների միջեւ ընթանալիք այս ճակատամարտը հսկայական խթան կդառնա ողջ աշխարհում շախմատի զարգացման համար»:**



**Հիշեցնենք, որ Կասպարովը որոշ ժամանակ համագործակցում էր Կառլսենի հետ եւ դա լավ արդյունք տվեց: 1995-ին Կասպարովը հանդիպել է Անանդի հետ աշխարհի չեմպիոնի տիտղոսի համար մրցախաղում ու հաղթել է 10,5-7,5 հաշվով:**

## Մարիա Գեւորգյանը հետապնդում է առաջատարներին

**Հնդկաստանի Չեննայ քաղաքում մեկնարկած շախմատի կանանց մրցաշարի 100 մասնակիցների թվում է Հայաստանը ներկայացնող Մարիա Գեւորգյանը: Անցկացված 3 տուրից հետո նա ունի 2 միավոր: Մեկնարկում Մարիան 2 անընդմեջ հաղթանակ տոնեց Կավիայի եւ Գոչիկար Ապարաջիտայի նկատմամբ: Իսկ ահա 3-րդ տուրում հայ շախմատիստուհին զիջեց ռուսաստանցի գրոսմայստեր Իննա Իվախինովային:**

**Ռուսաստանը ներկայացնող Կարինա Համբարձումովան ունի 2,5 միավոր: Մեկնարկում հաղթելով Մեերային եւ Անտո Ջենիտային, 3-րդ տուրում Կարինան հաշտություն կնքեց Մոնիշայի հետ: 3-ական միավորով աղյուսակը գլխավորում են 7 շախմատիստուհիներ:**

## Ջոկովիչը կիսաեզրափակիչում է

**Լոնդոնի թենիսի մրցաշարի 2-րդ տուրում հաղթելով Խուան Մարտին դել Պոտրոյին (6-3, 3-6, 6-3), Նովակ Ջոկովիչը ժամկետից շուտ կիսաեզրափակիչի ուղեգիր նվաճեց: Մյուս ուղեգիրը կվիճարկեն Ռոջեր Ֆեդերերն ու դել Պոտրոն:**

# Մրցանակի 3 հավակնորդ

Ճամայկացի արագավազորդ Ուսեյն Բոլտը, ուկրաինացի բարձրացատկորդ Բոգդան Բոնդարենկոն եւ բրիտանացի վազորդ Մո Ֆարան հավակնում են տարվա լավագույն թեթեւատլետի մրցանակին:

Մարզաձեւի միջազգային ֆեդերացիան նախապես կազմել էր 10 հավակնորդների ցանկը, որոնցից ընտրվել են վերը նշված 3 թեթեւատլետները: Հաղթողը հայտնի կդառնա նոյեմբերի 16-ին, Մոնակոյում:

Ուսեյն Բոլտն օլիմպիական խաղերի 6-ակի չեմպիոն է, 8 անգամ նվաճել է աշխարհի չեմպիոնի տիտղոսը, համաշխարհային 8 ռեկորդների հեղինակ է:

Բոնդարենկոն այս տարի Մոսկվայում կայացած թեթեւատլետիկայի աշխարհի առաջնությունում ոսկե մեդալի է արժանացել բարձրացատկում՝ ցույց տալով 241 սմ արդյունք, որը լավագույն ցուցանիշն է աշխարհի առաջնությունների պատմության մեջ:

Մո Ֆարան միջին եւ երկար վազքատարածությունների օլիմպիական խաղերի եւ աշխարհի առաջնությունների բազմակի չեմպիոն է:

Էջը պատրաստեց ԱՇՈՏ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԸ

# Հ Ա Յ Տ Ա Ր Ա Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

## ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԳՈՒՅՔԸ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԵՎ ՕՏԱՐՄԱՆ ԱՃՈՒՐԴԸ ԵՎ ՄՐՑՈՒՅԹԸ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՂ ՈՒ ԱՆՑԿԱՑՆՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԸ ՀԱՅՏԱՐԱՐՈՒՄ Է ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՆԵՐՔՈՀԻՇՅԱԼ ԳՈՒՅՔԻ ՕՏԱՐՄԱՆ ԱՃՈՒՐԴ

| h/h | Գույքի հասցեն (գտնվելու վայրը) | Գույքի օգտագործման նպատակը | Հողամասի մակերեսը /քմ/ | Շինության մակերեսը /քմ/ | Մեկնարկային գինը (դրամ) |
|---|---|---|---|---|---|
| 1 | Բաշինջաղյան փողոց 192/6 | կաթսայատուն | 155.92 | 137.98 | 6,300,000 |
| 2 | Կոմիտասի պողոտա 34/5 | կաթսայատուն | 290.22 | 258.82 | 22,100,000 |
| 3 | Գյուրջյան 15/19 | կաթսայատուն | 5,992.14 | 703.01 | 94,800,000 |
| 4 | Շևչենկոյի փ. 34/3 | կաթսայատուն | 526.73 | 326.07 | 17,250,000 |
| 5 | Խաղաղ Դոնի փող. 27/4 | կաթսայատուն | 307.44 | 342.50 | 17,700,000 |
| 6 | Ն.Շենգավիթ 9փ., 2/3 | կաթսայատուն | 316.18 | 286.76 | 6,100,000 |
| 7 | Տիտոգրադյան փող. 1/9 | կաթսայատուն | 161.00 | 161.00 | 9,350,000 |
| 8 | Գաջեգործների փող. 74/2 | կաթսայատուն | 125.05 | 125.05 | 3,800,000 |
| 9 | Արցախի փողոց 8/13 | կաթսայատուն | 439.06 | 439.06 | 25,500,000 |
| 10 | Էրեբունի 1 | կաթսայատուն | 240.72 | 240.72 | 10,800,000 |
| 11 | Էրեբունի փողոց 29/1 | կաթսայատուն | 262.30 | 262.30 | 7,350,000 |
| 12 | Շահվերդյան 18, ԿՁՀ 31 | կաթսայատուն | 254.27 | 236.60 | 16,350,000 |
| 13 | Շիրակի 2 նրբ., 4/1 | կաթսայատուն | 206.00 | 152.87 | 6,150,000 |
| 14 | Իսակովի պող., 52/27 | կաթսայատուն | 158.76 | 158.76 | 6,850,000 |
| 15 | Գ. Մահարու 39/9 | կաթսայատուն | 328.00 | 328.00 | 9,050,000 |
| 16 | Թեյշեբաինի 1 շենք | Կաթսայատուն | 21035 | 753.1 | 401,760,000 |
| 17 | Նոր Նորք 8-րդ մ/շ Մինսկի փողոց 5/8 ՇՉԿ | Կաթսայատուն | 24671.48 | 3166.7 | 609,550,000 |
| 18 | Ծերենցի փողոց 3/3 | կաթսայատուն | 158.76 | 141.36 | 9,400,000 |
| 19 | Բագրատունյաց 49 | կաթսայատուն | 237.46 | 209.56 | 21,300,000 |
| 20 | Բաղրամյան 1 փակ. 14 շենք հ.163 տարածք | ոչ բնակելի տարածք | | 42.00 | 13,950,000 |
| 21 | Ն.Չարբախ 3-րդ փողոց 58/4 | շինություն | 41.65 | 33.07 | 2,250,000 |
| 22 | Անդրանիկի 10/1 շենք թիվ 57 | ոչ բնակելի տարածք | | 154.50 | 10,500,000 |
| 23 | Սիլիկյան թաղ. 10 փողոց 44 շին | շինություն | 1058.71 | 271.31 | 15,600,000 |
| 24 | Իսակովի 50/16 | կաթսայատուն | 101.76 | 84.56 | 4,450,000 |
| 25 | Լեփսիուսի 6փող. 37շ. 46շին | ոչ բնակելի տարածք | | 39.3 | 4,250,000 |
| 26 | Թումանյան 11 շենք 72 շին | ոչ բնակելի տարածք | | 10.3 | 1,000,000 |
| 27 | Աբովյան փողոց 62 շենք հ.31 | ոչ բնակելի տարածք | | 40.95 | 10,550,000 |
| 28 | Բագրատունյաց 22/6 | Կաթսայատուն | 284.82 | 252.84 | 16,700,000 |
| 29 | Շևչենկոյի 4/4 | Կաթսայատուն | 150 | 131.04 | 5,600,000 |
| 30 | Անդրանիկի 122/1 | Կաթսայատուն | 384.75 | 281.75 | 20,070,000 |
| 31 | Սուրենյանց փողոց Մեդիկ 2 | Կաթսայատուն | 352.2 | 262.7 | 18,500,000 |
| 32 | Նորք Մարաշ 9-րդ փողոց 121/1 | Կաթսայատուն | 105.6 | 89.6 | 6,350,000 |
| 33 | Մայիսի 9 փողոց 13/3 | կաթսայատուն | 148.75 | 139.15 | 6,950,000 |
| 34 | Սասունցի Դավիթ 13 | կաթսայատուն | 122.7 | 104.46 | 8,500,000 |
| 35 | Չարենցի 76/6 | կաթսայատուն | 54.82 | 42.04 | 8,600,000 |
| 36 | Քաջազնունու 11 շենք 111 | ոչ բնակելի տարածք | | 350.8 | 14,170,000 |
| 37 | Դավթաշեն ՇՉԿ հ. 3 | Կաթսայատուն | 20,891.14 | 2,402.60 | 139,300,000 |
| 38 | Չարենցի փողոց թիվ 76/5 | կաթսայատուն | 2,251.36 | 1,244.00 | 363,900,000 |
| 39 | Լենինգրադյան փողոց 38/4 | Կաթսայատուն | 219.15 | 161 | 9,495,000 |
| 40 | Արտաշիսյան 3 նրբ 26/3 | Կաթսայատուն | 168.32 | 143.37 | 3,420,000 |
| 41 | Արտաշիսյան 60/3 | Կաթսայատուն | 220 | 193.29 | 3,780,000 |
| 42 | Գուլակյան 16բ | Կաթսայատուն | 203 | 203 | 12,420,000 |
| 43 | Անդրանիկի փ. 40/3 | Կաթսայատուն | 337.28 | 287.92 | 19,350,000 |
| 44 | Էրեբունի 14/4 | Կաթսայատուն | 170.18 | 145.68 | 8,838,000 |
| 45 | Շիրակի փ.6/10 | Կաթսայատուն | 309.50 | 207.98 | 12,798,000 |
| 46 | Ա.Սարգսյան 5/2 | Կաթսայատուն | 127.40 | 99.18 | 5,400,000 |
| 47 | Հալաբյան 41/3 | Կաթսայատուն | 257.12 | 161.46 | 9,090,000 |
| 48 | Մալխասյանց 23/6 | Կաթսայատուն | 169.00 | 144.00 | 8,640,000 |
| 49 | Սևակի 7/6 | Կաթսայատուն | 190.29 | 139.20 | 10,260,000 |
| 50 | Սմբատ Զորավարի 42/3 | Կաթսայատուն | 262.26 | 217.11 | 11,385,000 |
| 51 | Ֆուրմանովի 1/1 | Կաթսայատուն | 295.85 | 278.97 | 14,940,000 |
| 52 | Զեյթուն 3 թաղ. Լեփսիուսի փող. 37/6 | Կաթսայատուն | 194.78 | 163.74 | 9,000,000 |
| 53 | Արշակունյաց պող. 32/4 | Կաթսայատուն | 138.17 | 101.13 | 9,810,000 |
| 54 | Հ.Էմինի 80/2 | Կաթսայատուն | 214.46 | 180.31 | 10,935,000 |
| 55 | Մամիկոնյանց 41 շենք 6 բնակարան | բնակարան | | 122.50 | 30,690,000 |
| 56 | Մամիկոնյանց 41 շենք 10 բնակարան | բնակարան | | 69.80 | 17,910,000 |
| 57 | Գ-3 թաղամաս հ.41 | անավարտ շինություն | 1,021.93 | 1,919.98 | 37,440,000 |
| 58 | Նուբարաշեն 2ա շենք 26 շինություն | ոչ բնակելի տարածք | | 118.51 | 10,143,000 |
| 59 | Արտաշիսյան պ., 3 նրբ. 26/2 | Կաթսայատուն | 141.75 | 117.06 | 3,033,000 |
| 60 | Շերամի 23/4 | Կաթսայատուն | 318.72 | 292.82 | 14,310,000 |
| 61 | Հ Հակոբյան 1/7 | Կաթսայատուն | 108.80 | 108.80 | 18,000,000 |
| 62 | Այասի փողոց թիվ 1/3 | Կաթսայատուն | 414.50 | 305.70 | 19,800,000 |
| 63 | Բաղրամյան 2 փակուղի 10/1 | Կաթսայատուն | 148.85 | 125.44 | 16,200,000 |
| 64 | Մամիկոնյանց փող. 56/9 | Կաթսայատուն | 218.24 | 260.50 | 31,545,000 |
| 65 | Դավթաշեն 4 թաղ. ԿՁՀ 2 | Կաթսայատուն | 247.00 | 216.00 | 16,290,000 |
| 66 | Դավթաշեն 4 թաղ. ԿՁՀ 3 | Կաթսայատուն | 265.50 | 212.30 | 18,000,000 |
| 67 | Հալաբյան 27շ. 75 տարածք | ոչ բնակելի տարածք | | 56.70 | 2,970,000 |
| 68 | Պուշկինի 44 | ոչ բնակելի տարածք | | 16.80 | 1,980,000 |
| 69 | Մաշտոցի 20 | ոչ բնակելի տարածք | | 37.80 | 5,670,000 |
| 70 | Զաքյան փողոց 1շենք 38 տարածք | ոչ բնակելի տարածք | | 58.10 | 6,660,000 |
| 71 | Կաթսայատուն Նոր Արեշ 1/25 | կաթսայատուն | 195.50 | 195.50 | 7,470,000 |
| 72 | Խաղաղ Դոնի փող. 7/8 | կաթսայատուն | 312.78 | 348.10 | 18,270,000 |
| 73 | Աթոյան փողոց անցուղի 18/3 | կաթսայատուն | 441.95 | 441.95 | 15,840,000 |
| 74 | Ռուբինյանց փողոց թիվ 24/1 | կաթսայատուն | 158.72 | 158.72 | 8,865,000 |
| 75 | Սեբաստիա 18/2 | կաթսայատուն | 194.83 | 173.00 | 7,830,000 |
| 76 | Վիլնյուսի փող.,67/2 | կաթսայատուն | 242.50 | 212.75 | 6,030,000 |
| 77 | Կուրղինյան 5/3 | կաթսայատուն | 162.97 | 135.50 | 6,750,000 |
| 78 | Սաֆարյան 16/4 կաթսայատուն | կաթսայատուն | 306.25 | 288.00 | 11,160,000 |
| 79 | Մոլդովական փողոց 50/9 | կաթսայատուն | 192.66 | 163.10 | 7,965,000 |
| 80 | Հ/Ա Բ-2 թաղ. 92 շենքի հ.20 | ոչ բնակելի տարածք | | 58.70 | 4,374,000 |
| 81 | Բաղրամյան 30 շենքի տարածք | ոչ բնակելի տարածք | | 89.70 | 12,690,000 |
| 82 | Նալբանդյան 50 շենքի տարածք | ոչ բնակելի տարածք | | 14.00 | 1,530,000 |
| 83 | Մամիկոնյանց 1/3 | կաթսայատուն | 307.20 | 280.90 | 21,510,000 |
| 84 | Դավթաշեն 2 թաղ. ԿՁՀ 1 | կաթսայատուն | 237.12 | 206.60 | 11,340,000 |
| 85 | Չեխովի 48/4 | կաթսայատուն | 160.25 | 131.30 | 11,475,000 |
| 86 | Աջափնյակ 16 թաղ 32 շենք 123 տարածք | ոչ բնակելի տարածք | | 15.90 | 410,000 |
| 87 | Միքայելյան փողոցի 30/2 | հասարակական | 132.05 | 104.13 | 6,950,000 |

Աճուրդին կարող են մասնակցել այն իրավաբանական և ֆիզիկական անձինք, որոնք Երևան համայնքի նկատմամբ օրենքով սահմանված կարգով ֆինանսական պարտավորություններ չունեն:

Աճուրդին մասնակցել ցանկացող անձինք աճուրդի կազմակերպման և անցկացման ընթացակարգին կարող են ծանոթանալ Երևանի քաղաքապետարանում, ինչպես նաև Երևանի քաղաքապետարանի ինտերնետային կայքում՝ WWW.YEREVAN.AM:

Աճուրդի պայմանների մանրամասներին, պայմանագրի տիպային օրինակին ծանոթանալու ու հայտ ներկայացնելու համար դիմել Երևանի քաղաքապետարան (Արգիշտի 1, մուտքը աշտարակի կողմից, 2-րդ հարկ, հեռ. 514173):

Աճուրդին մասնակցել ցանկացողները հայտին կից ներկայացնում են տեղական վճարի՝ 10000 դրամ և մեկնարկային գնի 5%-ի չափով նախավճարի վճարման անդորրագրերը:

Աճուրդը կայանալու է 2013թ նոյեմբերի 26-ին ժ.16.00-ին, ք. Երևան, Արգիշտի 1 հասցեում:

Հայտերն ընդունվում են աշխատանքային օրերին՝ մինչև 2013թ նոյեմբերի 26-ը, ժամը 14.00-ը:

***ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԳՈՒՅՔԸ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԵՎ ՕՏԱՐՄԱՆ ԱՃՈՒՐԴԸ ԵՎ ՄՐՑՈՒՅԹԸ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՂ ՈՒ ԱՆՑԿԱՑՆՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ***

# ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ԾԱՆՈՒՑՈՒՄ

**ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ԱՌԸՆԹԵՐ ՊԵՏԱԿԱՆ ԳՈՒՅՔԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ «ԱՃՈՒՐԴԻ ԿԵՆՏՐՈՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆԸ ՀՐԱՎԻՐՈՒՄ Է ԱՃՈՒՐԴԻ, ՈՐԸ ՏԵՂԻ ԿՈՒՆԵՆԱ 2013Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 11-ԻՆ ԵՎ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 26 -ԻՆ, ԺԱՄԸ՝ 12:00-ԻՆ, «ԱՃՈՒՐԴԻ ԿԵՆՏՐՈՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՀԱՍՑԵՆ՝ Ք. ԵՐԵՎԱՆ, Դ.ԱՆՀԱՂԹԻ 23:**

## ՎԱՃԱՌՎՈՒՄ Է

**ՀՀ կառավարության 2011թ. հուլիսի 21-ի թիվ 997-Ա որոշմամբ լուծարվող «Ագրոնավթաբազա» ՊՓԲԸ-ի (հասցեն՝ ք.Երեւան, Աջափնյակ, Հաղթանակի 1 փող. 46/1) հաշվեկշռում գտնվող գույքը**

| Հ/Հ | Գույքի անվանումը | Քանակ | Մակերեսը /ք.մ./ | Հողատարածք /հա/ | Գնահատված արժեքը /դրամ/ | Մեկնարկային գին /դրամ/ |
|---|---|---|---|---|---|---|
| 1 | «Ագրոնավթաբազա» ՊՓԲԸ-ի գույքը, որպես մեկ ամբողջական միավոր | | | 0.0988 | 16083700 | 16083700 |
| | այդ թվում՝ շենք, շինություններ (անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման թիվ 12022013-01-2052 վկայական)՝ | | 307.3 | | | |
| | Բենզալցակայան | | 110.2 | | | |
| | Բենզալցակայան | | 180.1 | | | |
| | Պարիսպ | | 17 | | | |
| | Այլ հիմնական միջոցներ | | | | | |
| | Մետաղյա տարողություն 10տ | 10 | | | | |
| | Մետաղյա տարողություն 75տ | 4 | | | | |
| | Մետաղյա տարողություն 50տ | 4 | | | | |
| | Վակուումի պոմպեր | 8 | | | | |
| | Լցակայան բենզինի և դիզելային վառելիքի | 2 | | | | |
| | Լցակայան յուղի | 1 | | | | |
| | Խողովակաշար 150 գմ | 1 | | | | |

Աճուրդը կանցկացվի դասական (գնի ավելացման) եղանակով:

Աճուրդին կարող են մասնակցել ֆիզիկական եւ իրավաբանական անձինք, ինչպես նաեւ համայնքները, որոնք մինչեւ աճուրդի բացմանը նախորդող աշխատանքային օրը, ժամը՝ 17:00 աճուրդային հանձնաժողովին են (հասցեն՝ ք. Երեւան, Դ.Անհաղթի 23) ներկայացրել.

- աճուրդի նախավճարի մուծման անդորրագիրը, որի չափն է՝ 804185 դրամ, մուտքագրման հաշիվն է «ՀայԷկոնոմբանկ» ԲԲԸ-ի թիվ 163518001652 դրամային հաշիվը:

- անձնագիրը, իսկ իրավաբանական անձինք հիմնադիր փաստաթղթերի պատճենները եւ լիազորությունները հաստատող փաստաթղթերը:

Վերը նշված փաստաթղթերի առկայության դեպքում աճուրդային հանձնաժողովը մասնակցին տրամադրում է մասնակցի վկայական: Աճուրդին չեն կարող մասնակցել այն անձինք, ովքեր վաճառվող լոտի նկատմամբ չեն կարող ունենալ սեփականության իրավունք:

Աճուրդին կարող են ներկա գտնվել դիտորդներ՝ աճուրդի մասնակից չհամարվող այն անձինք, ովքեր վճարել են մուտքի վճար՝ 3000 դրամ: Աճուրդի մասնակցի վկայականները տրամադրվում են «Աճուրդի կենտրոն» ՊՈԱԿ-ում (հասցեն՝ ք.Երեւան, Դ.Անհաղթի 23) մինչեւ աճուրդի բացմանը նախորդող աշխատանքային օրը, ժամը՝ 17:00, իսկ դիտորդի տոմսերը վաճառվում են՝ ընդհուպ մինչեւ աճուրդի սկսվելը:

Աճուրդի մասնակիցների անձնագրի առկայությունը պարտադիր է:

Աճուրդի մասնակիցները վաճառվող լոտ(եր)ին կարող են ծանոթանալ սույն ծանուցման հրապարակման պահից մինչեւ աճուրդի բացմանը նախորդող օրը ընկած ժամանակահատվածում՝ յուրաքանչյուր երկուշաբթի, չորեքշաբթի եւ ուրբաթ օրերին, ժամը՝ 09:00-ից մինչեւ 17:00 (բացառությամբ ժամը՝ 13:00-ից մինչեւ 14:00), դիմելով Վ.Ծովյանին 091-40-89-02 հեռախոսահամարով:

Նախքան աճուրդի սկսվելը՝ աճուրդային հանձնաժողովը գրանցում է մասնակիցներին եւ յուրաքանչյուր մասնակցին տրամադրում է քարտ:

Աճուրդը վարում է աճուրդավարը: Աճուրդավարը մասնակիցներին առաջարկում է մեկնարկային գնով գնել լոտը: Յուրաքանչյուր մասնակից իրավունք ունի, նախքան աճուրդավարի մուրճիկի երրորդ հարվածը, ներկայացնել նոր գնային հայտ, որը պետք է գերազանցի մասնակիցների կատարած նախորդ գնային հայտը՝ նվազագույնը հավելման (քայլի) չափով: Վերջին ամենաբարձր գնային հայտ ներկայացրած մասնակիցը, աճուրդավարի մուրճիկի երրորդ հարվածից հետո, համարվում է աճուրդի հաղթած մասնակից: Եթե մի քանի մասնակից միաժամանակ գնային հայտ են ներկայացրել հավասար չափով, որից հետո ավելի բարձր գնային հայտ չի ներկայացվել, ապա աճուրդի հաղթած մասնակից է համարվում վիճակահանության արդյունքներով ընտրված մասնակիցը: Աճուրդավարի կողմից աճուրդի հաղթող համարված մասնակիցը պարտավոր է՝ հանձնարարագիր ստանալուց երեսուն րոպեի ընթացքում, վճարել իր առաջարկած գնի առնվազն 3 տոկոսի չափով գումար, որը սահմանված ժամկետում (10 օրվա ընթացքում) հետագա վճարումները կատարելու դեպքում, նախավճարի հետ միասին հաշվարկվում է վճարման ենթակա գումարի մեջ (մեկից ավելի լոտ ձեռքբերելու դեպքում նախավճարը հաշվարկվում է ամենաբարձր վաճառքի գին ունեցող լոտի վճարման ենթակա գումարի մեջ), իսկ վճարումներից խուսափելու դեպքում չի վերադարձվում եւ տվյալ մասնակիցը զրկվում է աճուրդին մասնակցելու իրավունքից, իսկ լոտի աճուրդը վերսկսվում է մեկնարկային գնից: Եթե աճուրդում հաղթող համարված մասնակիցը սահմանված ժամկետում (հանձնարարագիր ստանալուց 30 րոպեի ընթացքում) վճարում է իր առաջարկած գնի առնվազն 3 տոկոսի չափով գումար, ապա նա ճանաչվում է աճուրդի հաղթող եւ ստորագրում է աճուրդի արդյունքների մասին արձանագրությունը: Աճուրդում վաճառված լոտի գոյացած գինը նվազագույն աշխատավարձի հիսնապատիկի չափը չգերազանցելու դեպքում հաղթող մասնակիցը աճուրդի արդյունքների մասին արձանագրության ստորագրման օրը վճարում է լոտի ամբողջ գումարը:

Աճուրդում չհաղթող մասնակցին, մուծված նախավճարը վերադարձվում է վերջինիս՝ մեկ աշխատանքային օրվա ընթացքում գրավոր դիմելուց հետո:

Աճուրդի կանոնակարգին ծանոթանալու (որը տրամադրվում է դիմումի առկայության դեպքում, մեկ օրվա ընթացքում, պատճենահանման ծախսերը վճարելու պայմանով) եւ լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար, կարող եք դիմել ք. Երեւան, Դ.Անհաղթի 23 հասցեով կամ զանգահարել աճուրդային հանձնաժողովին՝ հեռ. 23-73-00, ինտերնետ URL://www.spm.am:

Հնարավոր փոփոխություններն ու լրացումները կիրապարակվեն այն ձեւով, ինչպես կատարվել է աճուրդի մասին սույն հրապարակային ծանուցումը:

***ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչության «Աճուրդի կենտրոն» ՊՈԱԿ***

ԳՈՎԱԶԴԻ ՀԱՄԱՐ ԶԱՆԳԱՀԱՐԵԼ՝ 58-29-60, 060 271112

Լրատուական գործունէութիւն իրականացնող՝ «Ազգ օրաթերթ» ՍՊԸ, Երեւան, Հանրապետութեան 47: Պետական գրանցման վկայականի համարը՝ 04 Ա N 047261, տրուած՝ 18.02.00 թ.:
Թողարկման պատասխանատու, գլխ. խմբ. Յակոբ Աւետիքեան: Տպաքանակ՝ 3000, ստորագրուած է տպագրութեան 8.11.2013, գինը՝ 100 դրամ, տպագրւում է «Տիգրան Մեծ» հրատարակչութեան տպարանում՝ Արշակունեաց 2: